ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՍԵԿՏՈՐ

№ I Գիտա - ինֆորմացիոն բյուլետեն 1974

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԵՐԵՎԱՆ - 1974

ИНСТИТУТ ИСТОРИИ АН АРМЯНСКОЙ ССР

СЕКТОР НАУЧНОЙ ИНФОРМАЦИИ ПО ОБЩЕСТВЕННЫМ НАУКАМ АН АРМ. ССР

№ I Научно-информационный бюллетень 1974

# ПРОБЛЕМА УСТАНОВЛЕНИЯ СОВЕТСКОЙ ВЛАСТИ В АРМЕНИИ В СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

Редакционная коллегия:

Х.А.БАРСЕГЯН /отв. редактор/,
Л.О.БАБАЯН, Г.А.ГАЛОЯН,
Л.Л.КАРАПЕТЯН, В.А.ХАЧАТУРЯН

Ереван 1974

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱ-
ՑԻԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

---

N 1 Գիտա-ինֆորմացիոն ցուցակ 1974

# ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ՍՈՎԵՏԱՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Խմբագրական կոլեգիա
Խ.Հ.ԲԱՐՍԵՂՅԱՆ /գլխ. խմբագիր/
Լ.Հ. ԲԱԲԱՅԱՆ, Գ.Ա.ԳԱԼՈՅԱՆ, Վ.Ա.
ԽԱՉԱՏՐՅԱՆ, Լ.Լ.ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

A II / 52946

ԵՐԵՎԱՆ-1974

## ԱՌԱՋԱԲԱՆ

ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի գիտական աշխատակից Պ.Ս. Մելիքյանը հրատարակության է պատրաստել ,,Հայաստանում Սովետական իշխանության հաստատման պրոբլեմը սովետահայ պատմագրության մեջ,, վերնագրով, մենագրությունը:

Այն գիտա-վերլուծական, աղբյուրագիտական – մատենագիտական աշխատություն է: Սույն քողարկումը հարուստ նյութ է պարունակում պրոբլեմի վերաբերյալ:

ՀՍՍՀ ԳԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՀՍՍՀ ԳԱ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳԻՏԱԿԱՆ ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ՍԵԿՏՈՐ

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի պատմության ուսումնասիրումը սովետահայ պատմագրության սկզբնավորումից ի վեր մշտապես գտնվել է հանրապետության պատմաբանների ուշադրության կենտրոնում: Դեռևս 1920-ական թթ. հրատարակվեցին Աշոտ Հովհաննիսյանի, Շ. Ամիրխանյանի, Թ.Մանդալյանի ուսումնասիրությունները՝ նվիրված մայիսյան ապստամբության և սովետական իշխանության հաստատմանը[1]: Քննարկվող ժամանակաշրջանի մի շարք հարցեր, հատկապես Հայաստանը խոշոր տերությունների դիվանագիտական կոմբինացիաներում հարցերը,իրենց լուսաբանումն են ստացել Բ.Բորյանի երկհատոր մենագրության մեջ[2]: Բացի նշված ուսումնասիրություններից, պարբերական մամուլի էջերում հրապարակվեցին մեծ քանակությամբ հոդվածներ՝ մեծ մասամբ վիճաբանական բնույթի, որոնցից մասնավորապես առանձնանում են Ս. Կասյանի երկու ուսումնասիրությունները[3]:

Մայիսյան ապստամբության պատմության առանձին վիճելի հարցերի առկայությունը թելադրեց դիսկուսիա սկսելու պարբերական մամուլում: Սակայն թե 1927-1923 թթ. և թե 1959-ին սկսված դիսկուսիաները իրենց հիմնական խնդիրը չկատարած դադարեցվեցին:

1930-ական թթ. մեզ հետաքրքրող պրոբլեմի վերաբերյալ հրատարակվել են մի քանի ուսումնասիրություններ, որոնցից Վ. Պարսամյանի և Մ.Ներսիսյանի աշխատություններն են[4], որ գիտահետազոտական բնույթ են կրում, իսկ մյուսները գրեթե հուշագրություններ են[5]: Նշված հրատարակություններում համառոտակի լուսաբանվել են դաշնակցական կառավարության ներքին քաղաքականության առանձին կողմեր և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում:

Սովետահայ պատմագրության մեջ կարևոր ներդրում էր դաշնակցականների ներքին ու արտաքին քաղաքականության և մայիսյան ապստամբության վերաբերյալ արխիվային փաստաթղթերի և հուշերի ժողովածուների հրատարակումը[6]:

-------------

1 Ա.Հովհաննիսյան, Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը, Ե.1923թ. Նույնի,Համազգային սկիզբը Ե..1926թ.,Շ.Ամիրխանյան,Մայիսյան ապստամբությունը Հայաստանում /1920/,Մոսկվա,1926թ.,Թ.Մանդալյան,Մայիսյան ապստամբությունը, Ե.,1929թ.:

2 Б.Борьян.Армения международная дипломатия и СССР,М.-Л.1928-29.

3 Ս.Կասյան, Չափության հիվանդությունը մեզանում, ,,Նոր-Աշխարհ,, 1922,նո.2,Նույնի,Հայաստանում տնտեսական դասակարգային ստրուկտուրան, ,,Նոր-Աշխարհ,, 1922, նո.1:

4. Վ.Պարսամյան,Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում,Ե.,1932, Մ.Ներսիսյան,Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում,Ե.,1935, Նույնի, ,,Դաշնակցական դրախտավայրը,,կամ սովի և մահվան աշխարհը Ե.,1932:

5. Խանոյան Ս.Մայիսյան ապստամբությունը,Ե.,1930.Մելիք-Շահնազարյան Ա.Մայիսյան ապստամբությունը Հայաստանում,Ե.,1930:

6. Մայիսյան ապստամբությունը Հայաստանում,1920-1930/հիշողությունների և դոկումենտների ժողովածու/,Ե.,1930,Ղազարյան Կ.և Ներսիսյան Մ.Առաջին մասսայական հեղափոխության շարժումները Հայաստանում/նյութեր և փաստաթղթեր/Ե.,1932:

Սակայն հարկ է նկատի ունենալ, որ 1920-30-ական թթ. հրապարակի վրա եղած գրականությունը հիմնականում նվիրված էր մայիսյան ապստամբության և դրան հաջորդող իրադարձություններին, իսկ նախորդ ժամանակաշրջանի պատմության հարցերը ուսումնասիրողների տեսադաշտից դուրս էին մնացել: Մասամբ այդ պետք է բացատրել պատմական վավերագրերի սակավությամբ և անհատի պաշտամունքի հետևանքով առաջացած դժվարություններով:

Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարի պատմության բազմակողմանի հետազոտման ու լուսաբանմանը սովետահայ պատմաբանները ձեռնամուխ եղան 1950-ական թթ. կեսերից: Սովետական պատմագրության զարգացման այս նոր էտապում մեր պատմաբանները հաղթահարելով գաղափարախոսության բնագավառում անհատի պաշտամունքի վնասակար ներգործությունը, նշանակալի հաջողությունների հասան պրոբլեմի ուսումնասիրման ասպարեզում: Եվ, որ կարևորն է, առանձին հարցերի նվիրված աշխատություններին զուգընթաց հրապարակ են իջնում մեծ թվով մենագրություններ, հեղինակային կոլեկտիվների ջանքերով կազմված աշխատություններ, բուհական ձեռնարկներ, որոնց սիստեմատիկորեն լուսաբանվել է պրոբլեմը իր ամբողջության մեջ վերցրած[1]:

---

1 Հ.Մ.Էլչիբեկյան,Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում/ռուսերեն/Ե.,1954:Նույնի,Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում/ռուսերեն/Ե.,1957, Նույնի,Հայաստանը Մեծ Հոկտեմբերի նախօրյակին/ռուսերեն/,Ե.,1963,Գ.Բ. Ղարիբջանյան,Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարում,Ե.,1955:Նույնի Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունը 1917-1920 թթ,Ե.,1958, Նույնի,Վ.Ի.Լենինը և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները /ռուսերեն/,Ե.,1967,Նույնի,Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, Ե., 1955, Գ.Ա.Գալոյան, Պայքար սովետական իշխանության համար Հայաստանում /ռուսերեն/ Մոսկվա,1957. Նույնի, Մայիսյան հերոսական ապստամբությունը, Ե.,1960, Նույնի, Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Ե., 1961: Նույնի, Բանվորական շարժումը և ազգային հարցը Անդրկովկասում 1900-1922 /ռուսերեն/,Ե.,1969, Ա.Ն.Մնացականյան, Ամերիկյան ագրեսորների և նրանց գործակալների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատմությունից, Ե.,1953, Նույնի, Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները,Ե.,1961, Նույնի,Վ.Ի.Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Ե.,1963թ., Նույնի և ուրիշներ, Սովետական Ռուսաստանը և պայքար Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման և ամրապնդման համար,/ռուսերեն/,Բաքու,1969, Ծ.Աղայան, Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը,Ե.,1957, Նույնը ռուսերեն:Ս.Խ. Նարապետյան, Կոմունիստական կուսակցությունը Հայաստանում Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի համար մղված պայքարում /ռուսերեն/,Ե.,1959: Ս.Վարդանյան, Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում/ռուսերեն/ Ե.,1959, Ս.Ալիխանյան, Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում,Ե., 1964, Խ.Բարսեղյան, Հայաստանի կոմունիստական պարտիայի ձևավորումը,Ե.,1965,Լ.Մուրշուդյան, Ստեփան Շահումյան, պետական գործունեությունը 1917-1918,Ե.,1958,Վ.Միքայելյան,Հայաստանի գյուղացիությունը սովետական իշխանության համար մղված պայքարի ժամանակաշրջանում/1917-1920/Ե.,1960, Հ.Ս.Կարապետյան,Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920թ.Ե.,1961,Ա.Հ.Մելքոնյան,Մայիսյան

Անհրաժեշտ ենք համարում միաժամանակ նշել, որ չնայած նվաճումները նշանակալից են, այնուհանդերձ ժամանակաշրջանի մի շարք հարցեր, ինչպիսիք են դաշնակցականների վարած ներքին քաղաքականությունը, ազգային կուսակցությունների, Անդրկովկասյան հանրապետությունների փոխհարաբերությունների պատմության լուսաբանումը և այլն, դեռևս խորը հետազոտման կարիք ունեն:

## ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1917 թ. բուրժուա-դեմոկրատական հեղափոխության՝ սոցիալիստականի վերաճելու ընթացքի ուսումնասիրմանն են նվիրված Գ. Ղարիբջանյանի, Հ. Էլչիբեկյանի, Գ. Գալոյանի, Ծ.Աղայանի, Ս. Կարապետյանի, Ար.Մնացականյանի, Ս.Վարդանյանի, Վ. Միքայելյանի, Խ. Բարսեղյանի մենագրությունների, ինչպես նաև ,,Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության,,առաջին պրակի ,,Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր,,-ի, ,,Հայաստանի կոմկուսի պատմության ուրվագծերի,, , ,,Հայ ժողովրդի պատմության,, 7-րդ հատորի, Երևանի համալսարանի հրատարակած ,,Հայ ժողովրդի պատմություն,, 3-րդ և 4-րդ հատորների համապատասխան բաժինները:

Վերոհիշյալ աշխատություններում փաստական հարուստ նյութի հիման վրա լուսաբանվել են Հայաստանում սոցիալիստական հեղափոխության համար բոլշևիկյան կազմակերպությունների գլխավորությամբ աշխատավորության մղած պայքարի պատմությունը ամբողջությամբ վերցրած: Սակայն մինչև օրս էլ դեռևս հրապարակի վրա չկա այնպիսի ուսումնասիրություն, որտեղ բազմակողմանիորեն տրված լիներ Հայաստանի այդ ժամանակահատվածի լիակատար պատմությունը: Ճիշտ է, պատմական գիտությունների թեկնածու Հ.Էլչիբեկյանը առանձին ուսումնասիրություն է հրատարակել այս շրջանի վերաբերյալ[1], բայց այն ևս հազիվ թե կարելի է ամբողջական համարել, որովհետև հիշյալ աշխատությունում լուսաբանվել են միայն այն հարցերը /գլխավորապես սովետների գործունեությունը/, որոնք այս կամ այն չափով իրենց լուսաբանումն են գտել մինչ այդ եղած ուսումնասիրություններում: Քննարկվող ժամանակաշրջանի պատմությանը վերաբերող շատ հարցեր շրջանցվել են նաև այդ ուսումնասիրությունում: Հարկ ենք համարում նշել, որ ժամանակաշրջանի ոչ բոլոր հարցերն են մանրակրկիտ հետազոտման ենթարկվել: Դեռևս խորը ուսումնասիրման կարիք են զգում հայ իրականության մեջ եղած բուր-

---

- ապստամբության պատմության հարցի շուրջը, Ե., 1965, Ի.Հ.Ալաբեկյան, Վ.Ի.Լենինը և սովետական կարգերի հաստատումն ու ամրապնդումն Անդրկովկասում, Ե.,1961, Ա.Նայան,Հայաստանի միջազգային իրավական դրությունը 1920-1922, Ե.,1967, Հ.Վարդանյան, դաշնակցության պարտիան որպես օտարերկրյա իմպերիալիստների և ռուսական ուժերի գործակալ/1918-1920/Ե.,1957:

1 Հ.Էլչիբեկյան,Հայաստանը մեծ հոկտեմբերի նախօրյակին:

ժուական, մանրբուրժուական կուսակցությունների գործունեությունը, Անդրկովկասում ազգային փոխհարաբերությունները ու վերջինիս ազդեցությունը ազգային-ազատագրական շարժումների վրա և նման կարգի այլ հարցեր: Հետազոտողների ուշադրության կենտրոնում են գտնվել գլխավորապես հեղափոխական շարժումների հանգուցային հարցերը՝ փետրվարյան հեղափոխությունից հետո երկիշխանության առաջացումը, ժամանակավոր կառավարության ու նրա տեղական օրգանների, ինչպես նաև հակահեղափոխական կուսակցությունների հակաժողովրդական քաղաքականության մերկացումը, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ պրոլետարիատի և աշխատավոր գյուղացիության պայքարը շահագործող դասակարգերի տիրապետությունը տապալելու համար:

- 000 -

1917 թ. փետրվարին ժողովրդական լայն զանգվածների հուժկու հարվածների տակ Ռուսաստանում վերջնականապես ջարդուփշուր արվեց միապետական վարչակարգը: Հաղթական բուրժուա-դեմոկրատական հեղափոխության արդյունքն հանդիսացավ երկիշխանության հաստատումը՝ հանձին բանվորների, զինվորների պատգամավորների Սովետների և բուրժուական ժամանակավոր կառավարության:

Պատմական մի շարք օբյեկտիվ պատճառների առկայության հետևանքով փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսաստանում հաստատվեց երկիշխանություն:

Անդրկովկասում և Հայաստանում երկիշխանության առաջացման հարցը սովետահայ պատմագրության կողմից մինչև օրս հատուկ ուսումնասիրման առարկա չի դարձել: Մինչդեռ այդ հարցի կարևորությունը հեղափոխական իրադարձությունների, մասնավորապես հոկտեմբերյան հեղափոխությունից հետո Անդրկովկասում ստեղծված իրադրության գիտական ճիշտ մեկնաբանման համար անառարկելի է:

Սկզբից ևեթ նշենք, որ երկիշխանության հաստատման հարցը սովետահայ պատմագրության մեջ գրեթե վիճաբանության տեղիք չի տվել: Ուսումնասիրողների խոշորագույն մասը կանգնած է երկիշխանության գոյության փաստի ընդունման տեսակետի վրա: Եղել են առանձին ուսումնասիրողներ, որոնք փորձել են, սակայն փաստերի ոչ բավարար չափի օգտագործման և վերլուծման հիման վրա, ժխտել Անդրկովկասում երկիշխանության առկայության փաստը:

Սովետահայ պատմագրության մեջ այդ փորձը կատարվել է Բ.Բորյանի կողմից:

Բորյանը այն կարծիքին է, որ Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեն.,,... ըստ էության իշխանություն չուներ, չնայած ձևականորեն դրա իրավունքն ուներ: Զուգահեռաբար իշխանությունը պատկանում էր նաև այլ օրգանների

/եթե նաև է, հետևաբար կոմիտեն ինչ-որ չափով իշխանություն ուներ- Պ.Մ./, որոնք գործում էին իրենց սեփական ըմբռնմամբ, առանց Անդրկովկասյան հատուկ կոմիտեի համաձայնության,, վավերացման և ներգործության,,[1]:

Այնուհետև նշում է, որ ,,Անդրկովկասյան Հատուկ Կոմիտեն ոչ օրենսդրում և ոչ էլ կառավարում էր, այլ գորշ կյանք էր վարում...,,:

Ժխտել կամ, մեղմ ասած, կասկածի տակ դնել ԱՀԿ-ի փաստական իշխանությունը երկրամասում, նշանակում է դեմ գնալ պատմական իրողությանը:

Համաձայն Բ.Բորյանի, իրական իշխանություն չունեին նաև Սովետները: ,,Սովետների իշխանությունը,- գրում է նա,- ուներ ավելի բարոյական բնույթ, քան իրական և մեծ նշանակություն չէին տալիս,,[2]:

Բորյանը փաստական տվյալներով չի հիմնավորել իր այն կարծիքը, թե սովետները նույնպես իշխանությամբ չէին օժտված, չնայած այդ տեսակետը հեռու չէ ճշմարտությունից: Բ.Բորյանից հետո երկար ժամանակ այդ հարցը չարծարծվեց, իսկ վերջին տասնամյակում լույս տեսած ուսումնասիրություններում սովետների վերաբերյալ նրա տեսակետը անգամ հիշատակության չարժանացավ: Բոլոր հետազոտողները անխտիր պաշտպանում են այն տեսակետը, որի համաձայն Անդրկովկասում երկիշխանությունը անժխտելի փաստ է: Սակայն ներկայումս պատմաբաններից ոմանք այդ տեսակետը ընդունում են որոշ վերապահումներով:

Որոնք են երկիշխանության գոյությունը ընդունող պատմաբանների փաստարկումները: Ամենից առաջ այդ տեսակետը պաշտպանող պատմաբանները ելնում են այն բանից, որ եթե Ռուսաստանում հաստատվել էր երկիշխանություն, ապա Անդրկովկասը, որպես Ռուսաստանի բաղկացուցիչ մասի, բացառություն կազմել չէր կարող:

Երկրորդ և վերջին փաստարկը երկրամասում սովետների առկայությունն էր ինքնին, անկախ նրանից, թե դրանք ի վիճակի էին այդ բանին: Բացի այդ, հեղափոխության խաղաղ զարգացումը ևս կապվում է սովետների փաստական իշխանությամբ օժտվածության հետ, գտնելով, որ եթե երկիշխանություն չլիներ, ապա խաղաղ զարգացման մասին խոսք լինել չէր կարող:

Ակնհայտ է նաև, որ Անդրկովկասում հեղափոխության սկզբնական շրջանում, մինչև հետագայում էլ, չէր նկատվում ժողովրդական զանգվածների հեղափոխական պայքարի այնպիսի թափ, ինչպիսին էր կենտրոնական Ռուսաստանում: Անդրկովկասի համար, ինչպես նկատում է Մ.Ցերցվաձեն, փետրվարյան հեղափոխությունը որոշ չափով անսպասելի էր[3]: Այդ էր պատճառը, որ երկրամասում գործող կուսակցությունները, իսկ բոլշևիկները բացառություն չէին կազմում, սպասողական դիրք էին բռնել հեղափոխության առա-

---

[1] Բ.Բորյան, նշվ.աշխ., մաս 1-ին, էջ 393:
2. Նույն տեղում, էջ 493:
3 М.В.Церцвадзе, Революционное движение в Грузии, ч.П, стр.14.

ջին օրերին[1]։

Հենց սկզբից էլ, ինչպես Անդրկովկասի մյուս շրջաններում, այնպես էլ Հայաստանում, ստեղծված սովետներում մեծամասնություն կազմեցին համաձայնողական կուսակցությունները։ Պատմագրության մեջ այդ երևույթը բացատրվում է, բացի Ռուսաստանի կենտրոնի համար առկա պատճառներով, նաև Անդրկովկասի տնտեսական հետամնացությամբ, բանվոր դասակարգի թուլությամբ և բոլշևիկյան ամուր կազմակերպությունների բացակայությամբ, ինչպես և ազգային բազմազանության պարագայով[2]։

Ուսումնասիրողների մի մասը չժխտելով մենշևիկների, էսէռների և ազգայնական կուսակցությունների սովետներում մեծամասնություն կազմելու պարագան, կարծում են թե այդպես էր միայն սկզբնական շրջանում։ ,,Հեղափոխության առաջին ամիսներին ինչպես Ռուսաստանում,– գրում է Հ. Ալչիբեկյանը,– այնպես էլ Անդրկովկասում սովետներում մեծամասնություն էին կազմում մենշևիկներն ու էսէռները,,[3]։ Նույն կարծիքին է նաև Ծ. Աղայանը. ,,Անդրկովկասում նույնպես սովետների մեջ սկզբում խցկըվեցին հակահեղափոխական կուսակցությունների ներկայացուցիչները՝ մենշևիկներ, դաշնակներ և էսէռներ...,,[4]։ Իրականում մատնանշված կուսակցությունները ոչ միայն սկզբնական շրջանում, այլև հետագայում, անգամ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո, կարողացան սովետներում պահպանել իրենց գերակշիռ դիրքերը։

Հրապարակի վրա եղած գրականության ուսումնասիրումից պարզվում է, որ չնայած բոլորը, գրեթե անխտիր, ընդունում են երկիշխանությունը որպես փաստ, այնուամենայնիվ, այդ հարցը բավականաչափ լուսաբանված հազիվ թե կարելի է համարել։

Վերլուծելով ցարիզմի տապալումից հետո Անդրկովկասում ստեղծված յուրահատուկ իրադրությունը, Գ.Գալոյանը, երկիշխանությունը ընդունելով հանդերձ, միանգամայն ճիշտ կերպով նկատում է, որ ,,1917 թ. մարտի 9-ին ժամանակավոր կառավարությունը պետական դումայի անդամներից կազմեց Անդրկովկասյան հատուկ կոմիտե, որը փաստորեն ամբողջ իշխանությունը կենտրոնացրեց իր ձեռքում,, , իսկ սովետները դարձան այդ կոմիտեի հավելուկը[5]։

Ճշգրտելով Անդրկովկասյան Հատուկ կոմիտեի ստեղծման և սովետների

---

1 Նույն տեղում, էջ 28-42:
2 Գ.Ղարիբջանյան, նշվ.աշխ.էջ 57-58, Ս.Կարապետյան, նշվ.աշխ.էջ 19 և այլն:
3 Հ.Ալչիբեկյան, Հոկտեմբերյան Սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Ե.,1957, էջ 14:
4 Ծ.Աղայան, Հայ ժողովրդի ազատագրումը, էջ 35, ՀՍՍՀ ԳԱ Տեղեկագիր, 1957, նո.7, էջ 6: Տես նաև Ար. Մնացականյան, Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները, էջ 24:
5 Գ.Գալոյան, Պայքար սովետական իշխանության համար Հայաստանում էջ 19-20:

կազմակերպման վերաբերյալ փաստերը Գ.Ղարիբջանյանը եզրակացնում է.
,,Ռևոլյուցիայից հետո ամբողջ իշխանությունը մնում էր ունևոր դասակարգերի ձեռքին, որոնք դաշնակցած մենշևիկների, դաշնակների, մուսավաթականների, էսեռների հետ ձգտում էին ռևոլյուցիան ծառայեցնել իրենց դասակարգային շահերին,, , որ ,,Հայաստանի քաղաքներում և գյուղերում շարունակում էին տեր ու տնօրինություն անել քաղաքային և գյուղական բուրժուազիայի ներկայացուցիչները...,,[1]: Հարկավ, Սովետները հանդես եկան որպես իշխանության նոր օրգաններ և այդ ոչ ոք չի վիճարկում: Սակայն անհրաժեշտ է ցույց տալ թե սովետները, որպես այդպիսիք, իրականում ունեին իշխանություն, եթե այո, ապա ինչով էր այդ արտահայտվում: Ցավոք այդ հարցի պատասխանը փաստորեն դեռևս լիովին չի տրված:

Ինչպես պարզ երևում է, ուսումնասիրողների մեծ մասը ի վերջո կամա թե ակամա հանգում են երկիշխանության գոյության մերժմանը և այդ չպետք է պատահական համարել, որովհետև իրադարձությունների ընթացքը և դրանում սովետների ունեցած իրական դերը հնարավորություն չեն տալիս հակառակ եզրակացության հանգել:

Կարելի է բերել մի շարք փաստեր, որոնք ցույց են տալիս, որ սովետները Հայաստանում չափազանց թույլ գործունեություն են ծավալել և որի հետևանքով նրանք հազիվ թե կարողանային հանդես գալ որպես իշխանության կրողներ:

Սովետների թուլության մասին է խոսում նաև այն հանգամանքը, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից և ռուսական զորամասերի Հայաստանից հեռանալուց անմիջապես հետո, մինչև թուրքական բանակների Անդրկովկասի սահմանները ներխուժելը, Հայաստանում սովետների մեծագույն մասը դադարեցրին իրենց գործունեությունը:

- 000 -

Փետրվարյան հեղափոխությունից հետո ընկած ժամանակաշրջանի պատմության ուսումնասիրման առանցքը սովետահայ պատմագրության մեջ հանդիսանում է բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության սոցիալիստական հեղափոխության համար մղած պայքարի բազմակողմանիորեն լուսաբանումը:

Առանց սխալվելու կարելի է ասել, որ հանրապետության պատմաբաններին հաջողվել է ամենամանրամասն կերպով լուսաբանել ժողովրդական զանգվածների հեղափոխական պայքարը շահագործող դասակարգերի տիրապետությունը տապալելու համար: Վերլուծելով այդ ժամանակահատվածի իրադարձությունների օրինաչափ ընթացքը, նրանք ցույց են տվել, որ փետրվարյան հեղափոխությունը չլուծեց աշխատավորության համար կենսականորեն անհրաժեշտ

----------

1 Գ.Ղարիբջանյան, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, էջ 58-59:

սոցիալ-տնտեսական բազմաթիվ հարցեր: Բնականաբար այդ իրադրությունը հանգեցրեց նրան, որ փետրվարից հետո հեղափոխական շարժումները ինչպես Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում ավելի մեծ չափեր ընդունեցին:

Միևնույն ժամանակ ցույց է տրվել, որ հեղափոխական շարժումներն Անդրկովկասում, և հատկապես Հայաստանում, համեմատաբար ավելի թույլ կերպով արտահայտվեցին, քան Ռուսաստանի արդյունաբերական շրջաններում՝ գլխավորապես կապված լինելով երկրամասի տնտեսական հետամնացության և դրանից բխող մի շարք այլ առանձնահատկությունների հետ:

Հայաստանի էկոնոմիկայում արդյունաբերության տեսակարար կշռի խիստ ցածր մակարդակը և դրանով պայմանավորված բանվոր դասակարգի սակավաթվությունն ու անկազմակերպվածությունը, պրոլետարական դասակարգային գիտակցականության անբավարար աստիճանը անբարենպաստ ազդեցություն էին թողնում Հայաստանում սոցիալիստական հեղափոխության հետագա զարգացման վրա: Զուտ դասակարգային հողի վրա հեղափոխական ուժերի համախմբմանը խանգարում էր նաև ազգային, մանրբուրժուական կուսակցությունների գործունեությունը: Ուստի և պատմական իրականության հետ միանգամայն համահունչ է Գ.Ղարիբջանյանի այն միտքը, թե Հայաստանում բանվորները ,,դեռևս թույլ էին որպես դասակարգ և դեռ չէին ամրապնդվել որպես կազմակերպված միավոր...„[1]:

,,Թե մեր գործարանատերերը և թե մեր ,,բանվորները,, ,-գրում է Ս. Կասյանը,- այն սոցիալական կատեգորիաները չեն, որ սովորաբար գոյություն ունեն ,,ժամանակակից գործարաններում,, հարուստ երկրներում, այլ նրանք՝ իրենց խոշորագույն մեծամասնությամբ՝ մի կողմից մանր անհատականատերեր են, մանր բուրժուաներ, իսկ մյուս կողմից՝ հասարակ աշխատանքի ուժի վաճառողներ, պարզապես՝ մշակներ,,[2]:

Չնայած դրան, փետրվարյան հեղափոխությունից հետո Հայաստանում բանվորական շարժումը նկատելի վերելք է ապրում: 1917 թ. գարնան և ամռան ընթացքում Երևանում, Ալեքսանդրապոլում և այլ վայրերում տեղի են ունենում բանվորների գործադուլներ, միտինգներ, որոնք ուղղված էին ժամանակավոր կառավարության հակաժողովրդական քաղաքականության դեմ: Սակայն անհրաժեշտ է նշել, որ գործադուլների մեծ մասը հիմնականում տակավին կրում էին տնտեսական բնույթ և բանվոր դասակարգի թուլության ու անկազմակերպվածության հետևանքով սովորաբար վերջանում էին առանց որևէ նշանակալի արդյունքի: Այդ է վկայում Երևանում, Ալավերդում, Ղափանում տեղի ունեցած գործադուլները, որոնք մեծ մասամբ ավարտվեցին ամենևին էլ ոչ բանվորների հաղթանակով:

Պատմագրության մեջ մեծ ուշադրություն է դարձվել բանվոր դասակարգի 8-ժամյա բանվորական օրվա համար մղած պայքարի լուսաբանմանը: Ուսումնասիրողներից ոմանք հանգել են այն եզրակացության,որ Հայաստանի

------------

1 Գ.Ղարիբջանյան,Հայաստանի կոմ.կազմակերպությունները, էջ 58:
2 Ս.Կասյան, Հայաստանի տնտեսական դասակարգային ստ., էջ 19:

բանվոր դասակարգի համառ պայքարի շնորհիվ հաջողվեց հասնել 8-ժամյա բանվորական օրվա սահմանմանը:

Համաձայնողական կուսակցությունների վարքագծի հետևանքով Հայաստանի տերիտորիայում գործող բանվորական սովետները, սակավ բացառությամբ, վերածվել էին բուրժուական իշխանության օրգանների հավելուկների և չէին աջակցում բանվոր դասակարգի տնտեսական ու քաղաքական պահանջների իրականացման գործին:

Վերոհիշյալ պատճառով մեզ թվում է, որ բավարար հիմնավորված չէ Ծ. Աղայանի պաշտպանած տեսակետը, որ իբր ,,Բանվորների պատգամավորների սովետները վճռականորեն հանդես էին գալիս բանվորների պահանջների պաշտպանությամբ և պայքարում էին դրանց իրականացման համար,,[1]:

Հուլիսյան դեպքերից և գլխավորապես Կոռնիլովյան դավադրության ջախջախումից հետո Պետրոգրադում, ինչպես նաև Ռուսաստանի մյուս բանվորական խոշոր կենտրոններում հեղափոխական պայքարը ժամանակավոր կառավարության դեմ զանգվածային բնույթ ընդունեց. Նորից օրակարգի մեջ դրվեց ,,Ամբողջ իշխանությունը սովետներին,, լոզունգը:

Հետևելով այս ճիշտ դրույթին, մեր պատմական գրականության մեջ այն միտքն է արծարծված, որ հեղափոխական շարժումները Հայաստանում նույնպես բուռն վերելք են ապրել: Սակայն այդ տեսակետը հաստատող փաստեր գրեթե չեն բերվել: Վկայակոչված փաստերի մի մասն էլ չեն հաստատում այդ տեսակետը:

Չժխտելով հեղափոխական վերելքի առկայության փաստը, պետք է տարբերություն տեսնել Հայաստանում և կենտրոնական Ռուսաստանում ծավալված շարժումների միջև: Պետրոգրադում, Մոսկվայում և այլ կենտրոններում բանվորների հեղափոխական շարժումը բոլորովին նոր որակ էր ստացել: Եթե Կոռնիլովյան դավադրությունը ազդակ հանդիսացավ արդյունաբերական կենտրոններում բանվորական զանգվածների շրջանում համաձայնողական կուսակցությունների դիրքերի խիստ թուլացմանը, իսկ սովետներում ունեցած գերիշխանության կորստին, ապա Անդրկովկասում նման երևույթ չնկատվեց:

Հեղափոխական շարժումների նոր էտապում Հայաստանում տիրող իրադրության միանգամայն իրական մեկնաբանումը տրված է Ծ.Աղայանի կողմից: Նա նշում է, որ Անդրկովկասում, բացառությամբ Բաքվի, բուրժուազիային դեռևս հաջողվում էր պահպանել իր հիմնական դիրքերը, չնայած հեղափոխական շարժումը գնում էր դեպի խորացում[2]:

Փետրվարյան հեղափոխությունը չլուծեց նաև գյուղացիության համար կենսականորեն անհրաժեշտ հողային հարցը: Եվ միանգամայն բնական է, որ գյուղացիությունը ձեռնամուխ եղավ իր միջոցներով ու ձևերով լուծելու ագրարային հարցը:

-----------
1 Ծ.Աղայան, նշվ.աշխ., էջ 81-82:
2 Նույն տեղում- էջ 100:

Հեղափոխական պայքարի բաղկացուցիչ մաս հանդիսացող ագրարային շարժումները, ընականաբար, միշտ գտնվել են սովետահայ պատմաբանների ուշադրության առանցքում: Գ. Ղարիբջանյանը, Գ. Գալոյանը, Հ. Էլչիբեկյանը, Վ. Միքայելյանը և ուրիշներ իրենց աշխատություններում մանրամասն կերպով լուսաբանել են հայ գյուղացիության՝ հողի համար մղած պայքարի պատմությունը: Այս տեսակետից առանձնակի տեղ է գրավում Վ.Միքայելյանի ուսումնասիրությունը, որը քացառապես նվիրված է գյուղացիության մղած պայքարի ամենաքազմազան հարցերի հետազոտմանն ու մեկնաքանմանը:

Գյուղացիական շարժումներ տեղի են ունեցել միայն այն շրջաններում, ուր գոյություն է ունեցել կալվածատիրություն: Սակայն անհրաժեշտ է նշել, որ գյուղացիական զանգվածների դասակարգային թույլ գիտակցության հետևանքով շատ վայրերում /Զանգեզուր, Նախիջևան/, որտեղ կալվածատիրությունը զգալի չափերի էր հասնում, պայքարը հողի համար եղել է աննշան: Այդ մասին են վկայում ուսումնասիրողների կողմից բերված փաստերը, որոնք գերազանցապես վերաբերվում են Երևանի նահանգի, Երևանի, Էջմիածնի, Նոր-Բայազետի գավառներին և Թիֆլիսի նահանգի Բորչալուի /Լոռու շրջան/ գավառին: Իրականում այդ գավառներում է, որ ծավալվում են գյուղացիական ագրարային շարժումները:

Չպետք է մոռանալ նաև այն հանգամանքը, որ ի տարբերություն Ռուսաստանի կենտրոնական նահանգների, Հայաստանում ագրարային շարժումները սիստեմատիկ բնույթ չունեին և աչքի էին ընկնում իրենց տարերայնությամբ, որոշ բացառությամբ Լոռվա գավառակի, որտեղ բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության հետևանքով գյուղացիության պայքարը հողի համար որոշակի կերպով կազմակերպված բնույթ էր ստացել: Իսկ մնացած վայրերում իշխանության օրգաններին հաջողվում է վերջ տալ ագրարային շարժումներին: Այսպես, ,,Տեղեկություններ Կարսի մարզի վերաբերյալ,, զեկուցագրում հաղորդվում է, որ մարզում եղել են ագրարային թյուրիմացություններ, որոնք մարզային կոմիսարիատի ջանքերով հարթվել են[1]:

Ուսումնասիրություններում շատ քիչ՛է խոսվում քանվորական շարժման և գյուղացիական ելույթների միջև եղած կապի մասին: Բավարարվում են նրանով, որ ընդգծում են, թե ագրարային շարժումը տեղի էր ունենում պրոլետարիատի ազդեցության տակ, բայց թե ինչում էր կայանում այդ ազդեցությունը, այնպես էլ չի բացահայտված:

\- 000 -

Պատմական գրականության մեջ մեծ տեղ է տրված Հայաստանի տերիտորիայում գտնվող ռուսական զինվորների հեղափոխական շարժումների լուսաբանմանը:

---

1 ЦГА ГССР, ф. I47I, оп.I, д. 487, л.7.

Հեղափոխությունից հետո բանակում որոշ դեմոկրատացումը, բանակային կոմիտեների և զինվորական սովետների կազմակերպումը փոքր ի շատե պայմաններ ստեղծեցին երկրի քաղաքական կյանքին զինվորների մասնակցության համար:

Նշելով կովկասյան ռազմաճակատի զինվորների հեղափոխական շարժման մասին, ուսումնասիրողները բավարարվում են թիկունքային զորամասերով միայն: Մինչդեռ թիկունքում գտնվում էր կովկասյան բանակի չնչին մասը: Ռազմաճակատում և Արևմտյան Հայաստանում գտնվող զորամասերում տեղի ունեցած ելույթների մասին շատ քիչ բան է ասված:

Ուսումնասիրողների տեսադաշտից դուրս է մնացել գնդերում, դիվիզիաներում և զորամիավորումներում ստեղծված զինվորական կոմիտեների և դրանցում բոլշևիկների գործունեությունը: Աշխատությունների մի մասում անգամ չի հիշատակվում բանակային երկրային համագումարի մասին:

Մեծ նշանակություն տալով բանակում տարվող աշխատանքների ուժեղացմանը, բոլշևիկների երկրային առաջին համագումարը խնդիր դրեց հրավիրել զինվորական կազմակերպությունների համագումար: Այդ փաստը ինքնին նշանակում է, որ հետագայում արդեն բոլշևիկները ձեռնամուխ էին եղել զորամասերում կազմակերպություններ ստեղծելու կարևորագույն խնդրի իրականացմանը:

Բոլշևիկների կատարած անդուլ աշխատանքի շնորհիվ մենշևիկներն ու էսէռները բանակում հետզհետե կորցնում էին իրենց դիրքերը: Սկսվել էր զինվորների բոլշևիկացման պրոցեսը, որը ավելի խորացավ Կոռնիլովյան դավադրության ջախջախումից հետո: Սակայն Հոկտեմբերյան հեղափոխության նախօրյակին այդ պրոցեսը դեռևս չէր ավարտվել և հակաժողովրդական կուսակցությունները շարունակում էին պահպանել իրենց ազդեցությունը զինվորների զգալի մասի վրա:

- 000 -

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակից հետո Անդրկովկասի, այդ թվում և Հայաստանի, բոլշևիկները հնարավորություն ստացան դուրս գալ ընդհատակից և բացահայտ աշխատանք տանել ժողովրդական լայն զանգվածների շրջանում:

Պատմա-կուսակցական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվել բոլշևիկների ինչպես կազմակերպչական, այնպես էլ ագիտացիոն-պրոպագանդիստական գործունեության խորը լուսաբանման ուղղությամբ:

Հեղափոխության սկզբնական շրջանում Հայաստանում գործող բոլշևիկների հիմնական խնդիրն էր հանդիսանում ցարական ռեժիմի կողմից ջախջախված կուսակցական կազմակերպությունների վերականգնումը և նորերի ստեղծումը:

Հրապարակի վրա եղած գրականության ուսումնասիրումը հանգեցնում

է այն եզրակացության, որ մինչև փետրվարը Հայաստանի բոլշևիկյան կուսակցական կազմակերպությունները, որոնք ջախջախվել էին ցարական ռեակցիայի կողմից, դեռևս չէին վերականգնվել, հետևաբար հեղափոխական աշխատանքը բանվոր դասակարգի շրջանում տարվում էր անհատ բոլշևիկների կամ էլ նրանց խմբերի կողմից: Պրոլետարական այնպիսի կենտրոններում, ինչպիսիք էին Ալեքսանդրապոլը, Ալավերդին, Ղափանը նույնպես բոլշևիկյան կազմակերպություններ չկային: Ն. Լեժավան իր հուշերում հաղորդում է, որ մինչև փետրվարյան հեղափոխությունը Ալեքսանդրապոլում գոյություն չուներ ոչ մենշևիկյան և ոչ էլ բոլշևիկյան կազմակերպություն: Սոցիալ-դեմոկրատները աշխատում էին առանձին-առանձին: Միայն փետրվարից հետո հնարավոր է լինում անջատ խմբերը միավորել մեկ կազմակերպության մեջ[1]:

,,Մինչև փետրվարյան հեղափոխությունը ոչ մենշևիկները, ոչ էլ մենք չունեինք կազմակերպություն,- ասված է մի խումբ բոլշևիկների հուշերում,- մենք աշխատում էինք ցրիվ ու մենակ,,[2]:

Գ.Ղարիբջանյանը և Մ. Արզումանյանը իրենց աշխատություններում նույնպես նշում են, որ պատերազմի տարիներին Հայաստանի բանվորական կենտրոններում գործում էին բոլշևիկյան խմբակներ: Հետևաբար անհնար է համաձայնվել Ս.Վարդանյանի, Ս.Կարապետյանի հետ այն բանում, թե Հայաստանի բոլշևիկներին հաջողվել էր ռեակցիայի տարիներին և համաշխարհային պատերազմի շրջանում պահպանել կուսկազմակերպությունները[3]:

Առանձնապես ճիշտ է վարվել Հ.Ելչիբեկյանը, նշելով, որ միայն փետրվարից հետո Հայաստանում սկսում են ձևավորվել սոցիալ-դեմոկրատական կազմակերպություններ[4]: Այն, որ փաստորեն Հայաստանում բոլշևիկյան կազմակերպությունները վերականգնվել են միայն 1917 թ. փետրվարից հետո ցույց է տրված նաև Ս.Կարապետյանի աշխատության մեջ[5]:

Կուսակցության թե շարքային և թե ղեկավար շրջաններում եղած միավորչական ուժեղ հետամտության հետևանքով Անդրկովկասում ստեղծվեցին միացյալ կազմակերպություններ:

Նախկինում պատմագրության մեջ բոլշևիկների վարքը նշված քայլը դիտվում է, որպես տակտիկական լուրջ սխալ և ամենևին էլ չի ընդգծվում առանձին գործիչների ,,օպորտունիստական,, դիրքավորումից: Միացյալ կազմակերպությունների ստեղծումը ճիշտ կերպով դիտվում է որպես երկրում ստեղծված յուրահատուկ քաղաքական իրադրության և կուսակցական զանգվածների` հեղափոխության շատ հարցերի նկատմամբ ունեցած ոչ ճիշտ պատկերացման արդյունք:

---------

1 ՄԼԻ ՀՄԱ Ֆ. 4030, ց.1-ին, գ. 11, թ.1:
2 Նույն տեղում, Ֆ. 4033, ց.1-ին, գ. 776:
3 Ս.Վարդանյան, նշվ.աշխ.էջ 31, նաև Ս.Կարապետյան, նշվ.աշխ.էջ 20:
4 Հ.Ելչիբեկյան, Մեծ Հոկտեմբերի նախօրյակին, էջ 37:
5. Ս.Կարապետյան, նշվ.աշխ. էջ 22-23:

Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների տակտիկական այդ սխալը ուսումնասիրողների կողմից ճիշտ է չի շրջանցվել, բայց և նրա վնասակար հետևանքները խորը լուսաբանման չեն ենթարկվել:

Հայտնի է, որ Անդրկովկասի բոլոր կազմակերպություններում դեռևս ամռան սկզբներին տեղի ունեցավ բոլշևիկների սահմանազատումը մենշևիկներից: Մինչդեռ Հայաստանում, բացառությամբ Ալեքսանդրապոլի կազմակերպության, նույնպիսի երևույթ տեղի չունեցավ և շատ վայրերում, ընդհուպ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը և դրա հետո էլ, բոլշևիկները մենշևիկների հետ մնում էին միևնույն կազմակերպության մեջ: Սակայն մինչև այժմ դեռ լրիվ բացահայտված չէ, թե որոնք էին այն պատճառները, որ Հայաստանի բոլշևիկները, չնայած կուսակցության ապրիլյան կոնֆերանսի և 6-րդ համագումարի որոշումներին, շարունակում էին մնալ միևնույն կազմակերպության մեջ:

Բոլոր ուսումնասիրողներն էլ միահամուռ այն կարծիքին են, թե միավորումը զուտ ձևական էր և գրեթե չէր խանգարում մենշևիկների ու մյուս համաձայնողական կուսակցությունների դավաճանական, բուրժուազիայի շահերից բխող քաղաքականության մերկացմանը: ,,Բոլշևիկները,- գրում է Խ. Բարսեղյանը,- անզիջում դիմակայում էին մենշևիկներին,,[1]:

Անկասկած է, որ Անդրկովկասի բոլշևիկները գաղափարական ասպարեզում զիջումների չգնացին և համառ պայքարի գնով պահպանեցին մարքսիզմի անաղարտությունը: Բայց ինչպես փաստերն են վկայում հեղափոխության առաջին ամիսներին դիմում էին տակտիկական զիջումների՝ նպատակ ունենալով ապահովել հեղափոխական ուժերի միասնությունը:

Բոլշևիկների Կովկասյան երկրային 1-ին համագումարին արված զեկուցումներից զգացվում է, որ դեռևս ոչ բոլոր տեղերում էր, որ բոլշևիկյան կազմակերպությունների ձևավորման պրոցեսը ավարտվել էր: Եվ պատահական չէ, որ մինչև օրս, աղբյուրների բացակայության պատճառով, հետազոտողներին չի հաջողվել որոշել բոլշևիկյան կազմակերպություններում ընդգրկված անդամների ընդհանուր թիվը:

Թե ինչպես էր ընթանում պայքարը սովետներում բոլշևիկների և համաձայնողական կուսակցությունների միջև մեր պատմագրության մեջ, բացառությամբ Ալեքսանդրապոլի Սովետի, շատ քիչ նյութեր կգտնենք: Բոլշևիկյան համարվող սովետների վերաբերյալ եղած նյութերը նույնպես, որոնք հիմնականում հին բոլշևիկների հիշողությունների վրա են հիմնված, խիստ սակավ են, որի պատճառով հնարավոր չէ պարզել, թե ինչպիսի գործունեություն են ծավալել բոլշևիկները այդ սովետներում: Ավելի հանգամանորեն լուսաբանված է բոլշևիկների գործունեությունը Ալեքսանդրապոլի Սովետում: Ցույց է տրված, որ բոլշևիկների համառ պայքարի շնորհիվ հաջող-

---

1 Խ. Բարսեղյան, Հայաստանի կոմկուսի կազմավորումը, էջ 173:

վում է մի շարք արմատական հարցերում հաղթանակ տանել համաձայնողական կուսակցությունների դեմ:

Ընդհանրապես ուսումնասիրություններում բերված տվյալները թույլ են տալիս հանգելու այն եզրակացության, որ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպություններին այնպես էլ չհաջողվեց սովետներում ստանալ ձայների պարզ մեծամասնություն՝ անգամ Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ընկած ժամանակաշրջանում:

Փաստերի բացակայության պատճառով իր լիակատար լուսաբանումը չի ստացել նաև գյուղական շրջաններում գործող բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը: Թեկուզ այն փաստը, որ Երևանի նահանգի և Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիական համագումարներում բոլշևիկները առանձնապես մասնակցություն չունեցան, պարզ վկայումն է այն բանի, որ բոլշևիկյան աշխատանքը հայ գյուղացիության շրջանում շատ թույլ էր, բացառությամբ Լոռվա որոշ գյուղերի, որի պատճառով գյուղացիության մեծամասնությունը գտնվում էր համաձայնողական կուսակցությունների և մասնավորապես Դաշնակցություն կուսակցության ազդեցության տակ:

Միանգամայն իրավացի է Ս.Կասյանը, երբ նշում է, թե ,,Մենք /բոլշևիկներս/ ոչ թե քաղաքային և գյուղական զանգվածների խորքերն էինք մտնում, այլ՝ ըստ սովորության՝ սահմանափակվում բանվորության զարգացած խավերով,,[1]: Որ շատ վայրերում բոլշևիկների կողմից աշխատավորական զանգվածների շրջանում տարվող աշխատանքը պահանջված բարձրության վրա չէր գտնվում, երևում է նաև ՌԿ/Բ/Կ Կենտկոմին և Վ.Ի.Լենինին ուղարկված մի նամակից: Այնտեղ նշվում է, որ Թիֆլիսի նորաստեղծ երրորդ շրջանում, որտեղ հաշվվում է մոտ 10 գործարան, մի քանի հազար բանվորներով, որոնց մեծ մասը կազմում էին հայերը, կուսակցական աշխատանքը անբավարար է ընթանում: Բավական է նշել, ասված է այնտեղ, որ կուսակցական շրջանային կոմիտեում ոչ մի հայ բանվոր չի ընդգրկված: ,,Եվ գործարանները,- շարունակում է նամակագիրը,- թողնվել են դաշնակցականներին ու մենշևիկներին: Վերջիններս... աշխատում են մեծ եռանդով և հայկական զանգվածների շրջանում հաջողություն ունեն,,[2]:

Կուսակցության 6-րդ համագումարի որոշումների հիման վրա բոլշևիկները ձեռնամուխ եղան զինված ապստամբության նախապատրաստմանը:

Եղած աշխատությունների ուսումնասիրումը բերում է այն եզրակացության, որ մինչև բոլշևիկների երկրային համագումարը զինված ապստամբության անմիջական նախապատրաստական աշխատանքներ տեղական կազմակերպությունների կողմից չեն տարվել: Որ այդպես էր, պարզ կերպով երևում է համագումարի նյութերից:

---

1 Ս.Կասյան, Ձախության հիվանդությունը մեզանում ,,Նոր-Աշխարհ,,նո.2
2 ՄԼԻ ՀՄԱ Ֆ. 4001,ց.1,գ. 32:

Տեղական կազմակերպությունների ներկայացուցիչների զեկուցումներում խոսք անգամ չկա այն մասին, թե կուսակցության 6-րդ համագումարի որոշումները զինված ապստամբության նախապատրաստման վերաբերյալ գործնականում ինչպես էր իրականացվում։

Սովետահայ պատմագրության մեջ բոլշևիկների Կովկասյան համագումարը իրավամբ բարձր գնահատական է արժանացել։ Ռուսաստանում և Անդրկովկասում հեղափոխական իրադարձությունների ծավալումը պահանջ էր առաջադրում մասսայական շարժումները ղեկավարելու համար բոլշևիկյան կուսակցության երկրային կենտրոնի ստեղծումը, ինչպես նաև տեղական կազմակերպությունների համար միասնական պլանի մշակումը։

Այդ գործը կատարեց հոկտեմբերի 2-7-ը տեղի ունեցած կովկասյան առաջին համագումարը։

Ինչպես իրավացիորեն նշել է Գ.Գալոյանը, ընթացիկ մոմենտի վերաբերյալ Ստ. Շահումյանի զեկուցումը ,,ըստ էության նվիրված էր զինված ապստամբության նախապատրաստման հարցերին,,[1]։ Նույն կարծիքին են այս պրոբլեմով զբաղվող սովետահայ պատմաբանների մեծամասնությունը։ ,,Ընթացիկ մոմենտի մասին ընդունած բանաձևում,- գրում է Գ. Ղարիբջանյանը,- համագումարը կոչ էր անում զինված ապստամբության միջոցով կոնտրռևոլյուցիոն ժամանակավոր կառավարությանը տապալելու և սովետական իշխանություն հաստատելու համար,,[2]։ Նույն տեսակետին են կանգնած Ս.Վարդանյանը, Ս.Պարապետյանը, Հ. Մելիքյանը և ուրիշներ։ Ս. Շահումյանը ընդգծել է, որ ,,կհրավիրվի սահմանադիր ժողով, թե ոչ, այն կարող է կանգնել քաղաքացիական պատերազմի առաջ,,[3]։ Այդ նշանակում էր, որ տեղական կազմակերպությունների առջև խնդիր էր դրվում նախապատրաստվել զինված ապստամբության միջոցով իշխանությունը գրավելու համար։ Նույն միտքն է անցկացված նաև Ստ.Շահումյանի զեկուցման առթիվ ընդունված բանաձևում։

Վերը նշված պատմաբանների տեսակետին տրամագծորեն հակադիր տեսակետ է պաշտպանում Ռ.Մանուկյանը։ Նրա կարծիքով համագումարը զինված ապստամբության պահանջ չառաջադրեց և այդ մոտեցումը ճիշտ էր, որովհետև Անդրկովկասում բոլոր պայմանները առկա էին կենտրոնում զինված ապստամբության հաղթանակից հետո խաղաղ ճանապարհով իշխանությունը գրավելու համար։ Ուստի, նշում է Ռ.Մանուկյանը, համագումարը խնդիր դրեց ուժեղացնել աշխատանքները սովետները բոլշևիկացնելու և այդ ճանապարհով գրավն-

---

1 Գ.Գալոյան, պայքար սովետական իշխանության համար, էջ 30։
2 Գ.Ղարիբջանյան, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները...էջ 121։
3 Ստ. Շահումյան, Երկեր, հ.2, էջ 514։

լու իշխանությունը[1]:Ինչպես տեսանք, չթերագնահատելով բոլշևիկների խնդիրները սովետներում մեծամասնություն նվաճելու և սովետների 2-րդ համագումարի հրավիրման առնչությամբ, ինչպես նաև սահմանադիր ժողովի ընտրությունների նախընտրական պայքարին մասնակցելուն, համագումարը միանգամայն ճիշտ կերպով գլխավոր խնդիրը համարեց նախապատրաստվել զինված ապստամբության միջոցով գրավելու իշխանությունը:

Համագումարի վերաբերյալ հրատարակած՝ իրենց ուսումնասիրություններում Ռ. Մովսիսյանը[2] և Կ. Ուղումյանը[3] նույնպես գտնում են, որ բոլշևիկների կովկասյան համագումարը,կուսակցության 6-րդ համագումարի որոշումներին համապատասխան,զինված ապստամբության կուրս վերցրեց:

Մյուս կարևոր հարցը, որի վերաբերյալ առանձին ուսումնասիրողներ հանդես են եկել քննադատական դիտողություններով Շահումյանի առաջարկությունների կապակցությամբ, ազգային հարցն է, որի ճիշտ լուծումը Անդրկովկասի պայմաններում բացառիկ նշանակություն ուներ հեղափոխության հետագա ընթացքի համար: Ազգային հարցի վերաբերյալ իր ելույթում քննադատելով Տորոշելիձեի զեկուցման մեջ թույլ տրված սխալները,Ստ.Շահումյանը առաջարկում է մարզային ինքնավարությունների փոխարեն ընդունել ավտոնոմիայի պահանջը, որը պետք է օժտված լիներ օրենսդրական լայն իրավունքներով: Միևնույն ժամանակ Ստ. Շահումյանը առաջարկում էր Անդրկովկասը բաժանել վարչական երեք միավորների, այն է.

1. Արևմտյան Անդրկովկաս, որի կազմի մեջ պետք է մտնեին Քութայիսի, Բաթումիի նահանգները և Թիֆլիսի նահանգի մի մասը,

2. Արևելյան Անդրկովկաս՝ Երևանի, Ելիզավետպոլի, Կարսի նահանգներով և Թիֆլիսի նահանգի մի մասը,

3. Բաքվի նահանգը, Ելիզավետպոլի նահանգի մնացած մասը և Դաղստանի մարզը[4]: Ինչպես տեսնում ենք ավված է շատ պարզ՝ Վրաստանին, Հայաստանին և Ադրբեջանին տալ մարզային ավտոնոմիայի իրավունքներ:

Չնայած այդ բանին,Ցերցվաձեն նշում է, որ Շահումյանը առաջարկում է Անդրկովկասի համար երկու ավտոնոմիա՝ Արևմտյան և Արևելյան, և որ ,,այդ ավտոնոմիան ոչ վրացական էր, ոչ ադրբեջանական և ոչ էլ հայկական, երկրորդ. միանգամայն անհասկանալի է, թե ինչու նա մասնատում է Վրաստանի տերիտորիան, մասնավորապես Թիֆլիսի նահանգը[5]:

Այս հարցում Ցերցվաձեն բացարձակ կերպով աղավաղել է Ստ. Շահումյանի տեսակետը: Ինչպես արդեն նշեցինք, իրականում Շահումյանը առաջարկել է

---

1 Ռ. Մանուկյան, Բոլշևիկների հեղափոխական աշխատանքը կովկասյան բանակում, Ե., 1969, էջ 175-176:
2 Ռ.Մովսիսյան, Կովկաս, բոլշ. կազմ. առաջին համագումար և Ստ. Շահումյանը, Ե.,1955:
3 Կ.Ուղումյան, ՌՍԴԲՊ/Կ/ Կովկաս, կազմ. առաջին համագումարը, Ե..1957թ.:
4 Ստ.Շահումյան, Երկեր, հ.2, էջ 515-516:
5 И.Церцвадзе, Революционное движение в Грузии, ч. П, стр. 235.

մարզային ավտոնոմիա երկու ժողովուրդների համար, իսկ ինչ վերաբերում է Վրաստանի անդամակցությանը, այդպիսի բան Ստ. Շահումյանը բոլորովին էլ չի առաջարկել: Պետք է ենթադրել, որ Ստ. Շահումյանի առաջարկի հիմքում ընկած էր՝ ա. Անդրկովկասում ազգային բնակչության վիճակը և բ. ավելի էապես վերոհիշյալ շրջանների տնտեսական առավել սերտ զարգացման անհրաժեշտությունը:

Պատմական գրականության մեջ մեծ տեղ է հատկացված նաև համագումարի կողմից քննարկված մյուս հարցերի, մասնավորապես ագրարային և Սահմանադիր ժողովի ընտրություններին մասնակցելու հարցերի լուսաբանմանը: Միևնույն ժամանակ ցույց է տրվել, որ բոլշևիկների կովկասյան երկրային համագումարը մեծ նշանակություն ունեցավ կուսակցական կազմակերպությունների գործունեությունը մեկ միասնական հունի մեջ դնելու, նպատակադրելու նրանց կուսակցության որոշումների գործնական իրականացման համար:

### ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ [illegible] ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ
/ 1917 հոկտեմբեր - 1918 մայիս/

Սոցիալիստական հեղափոխության հաղթանակը 1917 թ. հոկտեմբերին Պետրոգրադում և Մոսկվայում, ինչպես նաև Ռուսաստանի մյուս կարևոր կենտրոններում, արմատապես փոխեցին քաղաքական իրադրությունը Անդրկովկասում և նպաստավոր պայմաններ ստեղծեցին հեղափոխական շարժումների հետագա խորացման ճանապարհով Սովետական իշխանության հաղթանակի համար:

Սովետահայ պատմագրությունը իրավամբ միայն վերջին մեկ և կես տասնամյակում է, որ ձեռնամուխ է եղել Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ընկած ժամանակաշրջանի Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական շարժումների, սովետական իշխանության համար նրա մղած պայքարի պատմության ամբողջական լուսաբանման գործին:

Պատմական հարուստ նյութի հիման վրա համոզիչ կերպով ցույց է տրված, որ երկրամասի արդյունաբերական կենտրոններում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի լուրը ջերմորեն ընդունվեց աշխատավորական զանգվածների կողմից: Բոլշևիկների ղեկավարությամբ երկրամասի բանվորական կենտրոններում տեղի են ունենում միտինգներ և ցույցեր, որոնք անցնում են Սովետական իշխանությունը ճանաչելու և տեղերում տարածելու պահանջով:

Սակայն այդ բանը հաջողվեց միայն Բաքվի պրոլետարիատին: Բաքվի Սովետը ձայների ճնշող մեծամասնությամբ 1917թ. հոկտեմբերի 31-ի ընդլայնված նիստում բանաձև ընդունեց Սովետական իշխանությունը ճանաչելու մասին, որը գործնական կիրառում ստացավ նոյեմբերի 2-ից սկսած:

Հայաստանում փաստորեն հեղափոխական պայքարի ակտիվ մարտիկները մղվել էին հետին պլան, իրենց տեղը զիջելով բացառապես միայն խաղաղ ցույցերին ու միտինգներին: Գյուղացիական հուզումները, որը 1917-1918թթ. ձմռանը նկատելիորեն ակտիվություն էր ապրում, չհաշվելով Լոռվա գավառամասը, նորից կրում էին տարերային, անկազմակերպ բնույթ: Բոլշևիկյան կազմակերպություններին այնպես էլ չհաջողվեց, ըստ էության, կազմակերպված բնույթ հաղորդել գյուղացիական հուզումներին: Այդ մասամբ հետևանք էր բոլշևիկյան գավառային կազմակերպությունների թուլության:

Ս.Կարապետյանը և ուրիշներ անդրադառնալով գյուղացիական հուզումներին, այն կարծիքն են հայտնել, իբր հոկտեմբերյան հեղափոխությունից հետո միայն սկզբնական շրջանում է, որ շարժումը տարերային բնույթ էր կրում, որ հետագայում, սկսած 1918 թ. ագրարային շարժումները գլխավորվեցին բոլշևիկների կողմից և կազմակերպված բնույթ ստացան[1]: Հանրահայտ է, որ Անդրկովկասի գյուղացիական շրջանների մեծ մասում բոլշևիկյան կազմակերպություններ ոչ միայն Փետրվարյան, այլև Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո էլ տակավին չէին ստեղծվել: Եվ պատահական չէ, որ Ստ. Շահումյանը ,,Հողային հարցը և գյուղացիական ռևոլյուցիան Անդրկովկասում,, հոդվածում ուղղակիորեն նշում է, որ ,,վրացական գյուղացիության այն պասիվ և անտարբեր վերաբերմունքը /փետրվարյան հեղափոխության շրջանում/, որի մասին մենք այստեղ խոսեցինք և որը,կարելի է ասել ըստ էության շարունակվում է մինչև այժմ, բացատրվում է նաև նրանով, որ գյուղացիությունը իր մեծամասնությամբ գնում է մենշևիկների հետևից...,,: Ավելի վատթար վիճակ է տիրում, ասում է Ստ.Շահումյանը, հայկական և մուսուլմանական գյուղերում,"որտեղ տիրակալում են զանազան բեգերն ու աղալարները...,,[2]: Հարկավոր է նկատի ունենալ, որ Ստ. Շահումյանը ասել է 1918 թ. փետրվարի կեսերին:

Այսպիսով, պնդել, թե ագրարային շարժումները 1918 թ. սկսած արդեն կազմակերպված բնույթ էին ընդունել ամբողջ Անդրկովկասում, առարկայազուրկ է և իրականությանը չհամապատասխանող: Համաձայնողական կուսակցությունները դեռևս խոշոր ազդեցություն ունեին գյուղացիության ճնշող մեծամասնության վրա: Գրեթե նույնպիսի, կամ որոշ չափով պակաս, ազդեցություն ունեին նրանք նաև բանվոր դասակարգի շրջանում: Այդ է մեզ թելադրում այն իրողությունը, որ Հոկտեմբերից հետո ևս երկրամասի բոլշևիկներին չհաջողվեց թե տեղական և թե կենտրոնական սովետներում ստանալ ձայների պարզ մեծամասնություն: Առանձնապես այդ նկատելի է Հայաստանում: Բոլշևիկյան կազմակերպությունների թույլ գործունեության հետևանքով, որն արդյունք էր կազմակերպչական թուլության, հակահեղափոխական կուսակցություններին հաջողվեց պահպանել իրենց դիրքերը Հայաստանի

---

1 Ս.Կարապետյան, նշվ.աշխ., էջ 105:
2 Ստ. Շահումյան, Երկեր, հ.3, էջ 73-74:

սովետներում: Որ այդ կուսակցությունները հիմնականում կարողացան պահպանել իրենց դիրքերը աշխատավորական զանգվածների շրջանում, պարզ է դառնում նաև Սահմանադիր ժողովի ընտրությունների արդյունքներից: Հիշյալ կուսակցությունները այդ հեղինակությունից մասամբ կամ գրեթե լրովին զրկվել էին միայն Կովկասյան ռազմաճակատի թիկունքային զորամասերում, ուր անշեղորեն և արագ կերպով աճում էր բոլշևիկների ազդեցությունը: Այդպիսի պայմաններում, երբ համաձայնողական կուսակցությունները հիմնականում պահպանում էին իրենց ազդեցությունը, առանց որևէ վերապահումի ասել, ինչպես վարվում են պատմաբաններից ոմանք /Ս.Կարապետյան, Ս.Վարդանյան/թե Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները առանց տատանվելու ամբողջությամբ հանդես եկան սովետական իշխանության պաշտպանությամբ և պահանջում էին տեղերում նույնպես հաստատել սովետական կարգեր, համոզիչ չի հնչում:

Անշուշտ, անվիճելի է, որ Կոռնիլովյան դավադրության ջախջախումից հետո սկսվել, իսկ կենտրոնում սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո գնալով խորանում էր հակահեղափոխական կուսակցությունների հեղինակազրկման պրոցեսը: Սակայն անժխտելի է նաև այն, որ ,,բոլշևիկները այդ ժամանակ Անդրկովկասում դեռևս իրենց կողմը չէին նվաճել ժողովրդական զանգվածների լայն շրջաններին, իսկ հակահեղափոխական կուսակցությունները ուժեղ հակառակորդներ էին հանդիսանում[1],,: Միանգամայն իրավացի է Ծ.Աղայանը, երբ նշում է, որ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը ողջունեցին աշխատավորների առաջավոր ջոկատները[2]:

,,Կովկասը,- գրում է Ստ. Շահումյանը "Նոր իշխանության կազմակերպումը Կովկասում,, հոդվածում,- մանրբուրժուական երկիր է: Մենշևիկների, դաշնակցականների և մյուս մանրբուրժուական կուսակցությունները մեզանում միշտ գերակշռող դեր են խաղացել...Մանրբուրժուականությունը,մի կողմից, և նացիոնալիզմը,մյուս կողմից, մեր քաղաքական հետամնացության պատճառն են եղել Կովկասում,,[3]: Սակայն երկրում ստեղծված հեղափոխական իրադրությունը և այն, որ Անդրկովկասի բանվոր դասակարգի առաջավոր մասի և չքավոր գյուղացիության հետ համընթաց էին ռուսական բանակի թիկունքային առավել հեղափոխականացված զորամասերը, զրկում էր երկրամասի բուրժուազիային իր ունեցած առավելություններից, մի հանգամանք, որը բավարար չափով չօգտագործվեց բոլշևիկների Անդրկովկասյան երկրային կոմիտեի կողմից:

----------

1 Գ.Գալոյան, Պայքար սովետական իշխանության համար, էջ 35:
2 Ծ.Աղայան, նշվ.աշխ. էջ 125:
3 Ստ.Շահումյան, Երկեր, հ.3, էջ 22:

Կովկասյան երկրային կոմիտեի ղեկավարության մեծամասնությունը իշխանության համար մղվող պայքարի հարցում կանգնած լինելով տակտիկական սխալ ուղու վրա, տեղական կազմակերպություններին կողմնորոշեց դեպի պայքարի խաղաղ ճանապարհը: Փաստորեն իշխանության գրավման հարցը կապվեց Սովետների երկրային օրգանների վերընտրությունների հետ:

Հոկտեմբերից հետո Անդրկովկասում Սովետական իշխանության հաղթանակի հարցի վերաբերյալ սովետահայ պատմագրության /և ոչ միայն սովետահայ/ մեջ գոյություն ունեն տարբեր, իրարամերժ տեսակետներ, որոնք ըսկիզբ են առել դեռևս 20-ական թվականներից:

Տարամերժ կարծիքները հիմնականում հանգում են հետևյալին: Ուսումնասիրողների մի մասը /Ա.Հակոբյան, Բ.Նալբանդյան և ուրիշներ/ չժխտելով հանդերձ հոկտեմբերից հետո Անդրկովկասում հեղափոխական իրադրության առկայությունը և այն, որ դա կարող էր տվյալ էտապում ավարտվել սոցիալիստական հեղափոխության հաղթանակով, ժխտում են զինված ապըստամբության հնարավորությունը և գտնում են, որ բուրժուազիայի տիրապետությունը պետք է տապալվեր հեղափոխական շարժման խաղաղ զարգացման, սովետներում աստիճանաբար մեծամասնություն ձեռք բերելու ճանապարհով: Սակայն, վերոհիշյալ տեսակետը պաշտպանող պատմաբանների միջև գոյություն ունեն նաև տարակարծություններ:

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից անմիջապես հետո Հայաստանում Սովետական իշխանության հաստատման հնարավորության ժխտման է հանգել Ա.Վարդանյանը: Նա կարծում է, որ ,,Հայաստանում արդյունաբերության թույլ զարգացման հետևանքով հայկական պրոլետարիատը բավականաչափ կազմակերպված չէր և չէր կարող գլխավորել աշխատավորների պայքարը Սովետական իշխանության համար,,[1]:

Սովետահայ պատմաբանների մի ստվար մասը /Գ.Ղարիբջանյան, Գ.Գալոյան, Հ.Էլչիբեկյան, Ա.Մնացականյան, Լ.Խուրշուդյան, Ս.Կարապետյան, Հ. Մելիքյան և ուրիշներ/, որոնց տեսակետը այսօր իրապես տիրապետող է հանդիսանում, մերժելով Անդրկովկասում հեղափոխության խաղաղ զարգացման հնարավորությունը, գտնում են, որ երկրամասում Սովետական իշխանությունը կարող էր հաղթանակել միմիայն զինված ապստամբության միջոցով: Նրանց կարծիքով բուրժուազիայի իշխանությունը բռնի կերպով տապալելու համար Անդրկովկասում անհրաժեշտ նախադրյալներն առկա էին, իսկ թե ինչու այդ հնարավորությունը իրականություն չդարձավ, այս հարցում արդեն վերոհիշյալ պատմաբանները տարակարծիք են: Գ.Ղարիբջանյանը[2], Գ.Գալոյանը[3] երկրային կոմիտեի սխալ տակտիկան ընդգծելով հանդերձ,և

---

1 Ա.Վարդանյան,Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում,էջ 158:

2 Գ.Ղարիբջանյան,Հայաստանի կոմկազմակերպությունները,էջ 197-199, նույնի

3 Գ.Գալոյան,Պատմության կեղծարարության դեմ, էջ 49-54,նույնի,Պայքար սովետական իշխանության համար, էջ 93:

մատնանշելով երկրամասի սոցիալ-տնտեսական առանձնահատկությունները, այնուհանդերձ հեղափոխության հաղթանակի ճզճզման գլխավոր պատճառը համարում են օտարերկրյա իմպերիալիստական միջամտությունը:

Հակված ենք կարծելու, որ թերևս ավելի ճիշտ մոտեցում են ցուցաբերել այն ուսումնասիրողները, որոնք կարծում են, թե Անդրկովկասում բուրժուազիայի իշխանության տապալումը պետք է իրականացվեր զինված ապստամբության միջոցով: Եվ եթե այդ տեղի չունեցավ, ապա դրա պատճառները պետք է փնտրել կովկասյան երկրային կոմիտեի անվճռական գործունեության մեջ: Որ երկրային կոմիտեի որդեգրած տակտիկան չէր համապատասխանում Անդրկովկասում ստեղծված ռեալ իրադրությանը, ինքնին ապացուցվեց իրադարձությունների զարգացման հետագա ամբողջ ընթացքով: ,, ,,Կոնստիտուցիոն պատրանքների մասին,, հոդվածում Վ.Ի.Լենինը գրել է. ,,...ռևոլյուցիոն ժամանակ բավական չէ ի հայտ բերել ,,մեծամասնության կամքը,, ,- ոչ, հարկավոր է ավելի ուժեղ լինել վճռական մոմենտին վճռական տեղում, հարկավոր է հաղթել: Սկսած միջնադարյան ,,գյուղացիական պատերազմից,, Գերմանիայում և անցնելով բոլոր խոշոր ռևոլյուցիոն շարժումներին ու դարաշրջաններին ընդհուպ մինչև 1848 և 1871 թթ., ընդհուպ մինչև 1905 թվականը, մենք տեսնում ենք անթիվ օրինակներ, թե ինչպես ավելի կազմակերպված, ավելի գիտակից, ավելի լավ զինված փոքրամասնությունը փաթաթում է իր կամքը մեծամասնության վզին, հաղթում է նրան,,[1] :

Հետևաբար, այն փաստերը, որ բերվում են ցույց տալու, թե երկրային կոմիտեն 1918 թ. փետրվարյան դեպքերից հետո ձեռնամուխ եղավ զինված ապստամբության նախապատրաստման աշխատանքներին, որը, սակայն չիրականացվեց օտարերկրյա ինտերվենցիայի հետևանքով, դարձյալ վկայում են այն, որ իշխանությունը գրավելու համար պահը բաց էր թողնվել:

- 000 -

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո Անդրկովկասում ծավալված հեղափոխական շարժումների պատմության լուսաբանմանը զուգընթաց սովետահայ պատմագրությունը բացահայտել է նաև երկրամասի բուրժուական, մանրբուրժուական ազգայնական կուսակցությունների հետհոկտեմբերյան ժամանակաշրջանի աշխատավորական լայն զանգվածների շահերին հակասող, հակահեղափոխական գործունեությունը:

Թե որոնք են հակահեղափոխական կուսակցությունների հեղափոխական ուժերի նկատմամբ հաղթանակի հասնելու պատճառները, պատմական գրականության մեջ վերջին տարիներին հիմնականում բացատրվում է որպես իմպերիալիստական խմբավորումների կողմից Անդրկովկասի ներքին գործերին միջամտելու արդյունք՝ մի կողմ թողնելով դրան նպաստող ներքին պայմանները:

---

1 Վ.Ի.Լենին, Երկեր, հ.25, էջ 247:

Անշուշտ, պատերազմող երկու խմբավորումներն էլ՝ Անտանտայի երկրները իրենց դիվանագիտական ներկայացուցիչների, Թուրքիան մուսավաթականների միջոցով ակտիվ գործունեություն էին ծավալել Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության իրականացման դեմ:

Խոսելով Անդրկովկասում մենշևիկների և էսէռների ղեկավարությամբ ձևավորվող իշխանության մասին, Ստ. Շահումյանը նշում է, որ ,,միայն այդ երկու պաշտպանողական պարտիաների դաշինքը, լրացված հայերի, մուսուլմանների և մյուս ցեղերի ու ազգությունների նացիոնալիստական պարտիաներով, որոնք փաստորեն միավորում են Կովկասի բոլոր դասակարգերին ու դասերին,- չի կարող ռևոլյուցիոն իշխանություն ստեղծել,,[1]:

Ինչպես տեսնում ենք, Ստ.Շահումյանը շատ պարզ կերպով նշում է, որ հակահեղափոխական խմբավորումն այդ պահին իր կողմն ուներ բոլոր դասակարգերն ու դասերը: Եթե նկատի ունենանք նաև այն պարագան, որ հակահեղափոխական խմբավորումը օգտվելով բոլշևիկյան կազմակերպությունների անվճռականությունից կարողացել Կովկասի հեղափոխական շարժումներից մեկուսացնել ռուսական հեղափոխականացված զորամասերին, ապա թվում է, որ պարզ է դառնում նրանց հաջողության հասնելու որոշիչ պատճառները:

Անդրկովկասյան կոմիսարիատի հակաժողովրդական, հակաաշխատավորական քաղաքականությունը, նրա բուրժուական էությունը ամենախորը կերպով բացահայտվել է դեռևս Ստ. Շահումյանի կողմից: Դեռ կոմիսարիատի կազմակերպման օրերին Շահումյանը նշում էր, որ ,,այդ կլինի կառավարություն -Կերենսկու կառավարությունից ոչ լավ մի կառավարություն,,: Ելնելով նոր իշխանության մեջ մտնող կուսակցությունների բնույթից, Շահումյանը գտնում էր, որ ,,նա կարող է տալ մեզ միայն կարգի կառավարություն, հեղափոխության դեմ պայքարելու կառավարություն,,[2]:

Ինչպես արդեն ցույց է տրված մեր պատմական գրականության մեջ, Անդրկովկասյան կոմիսարիատը ներքին քաղաքականության բնագավառում վարում էր ռեակցիոն քաղաքականություն և փաստորեն զբաղված էր միայն ժողովրդական զանգվածների հեղափոխական շարժումները ճնշելով:

Անդրկովկասյան կոմիսարիատի, ինչպես նաև Սեյմի տիրապետության ժամանակաշրջանում երկրի տնտեսության քայքայումը ոչ միայն չկասեցվեց, այլ ընդհակառակը, աղետալի բնույթ ընդունեց: Բանվոր դասակարգի տնտեսական դրությունը գնալով վատթարանում էր: Չլուծվեց նաև ագրարային հարցը, չնայած գյուղում ծավալվող հեղափոխական շարժումների ճնշման տակ կոմիսարիատը ստիպված եղավ հողի վերաբերյալ օրենք հրատարակել:

-----------

1 Ստ.Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 21:

2. Նույն տեղում:

Անդրկովկասյան կոմիսարիատի ներքին ռեակցիոն քաղաքականությամբ պայմանավորված էր նրա արտաքին, նույնպես ռեակցիոն, քաղաքականությունը:

Կողմնորոշվելով դեպի իմպերիալիստական տերությունները և ռուսական հակահեղափոխության կողմը կոմիսարիատը թշնամական դիրք գրավեց Սովետական Ռուսաստանի նկատմամբ: Մերժելով պատերազմից դուրս գալու համար սովետական կառավարության դիվանագիտական քայլերը, սեպարատ բանակցությունների մեջ մտավ գերմանական խմբավորման երկրների հետ և չընախապատրաստեց երկիրը թուրքական վերահաս վտանգին դիմագրավելու համար:

Սովետահայ պատմաբաններն իրենց աշխատություններում ցույց են տվել, որ Անդրկովկասյան Կոմիսարիատը, իսկ այնուհետև Սեյմը, չնայած ինքնուրույն արտաքին քաղաքականություն վարելու կեցվածք էին ընդունել, հընազանդորեն կատարում էին իմպերիալիստական երկրների ներկայացուցիչների և ռուսական սպիտակգվարդիականների պահանջները: Իրականում նրանք անկախ էին միայն Սովետական Ռուսաստանից:

Միևնույն ժամանակ ցույց է տրվել պատերազմող խմբավորումների շահագրգռվածությունը Անդրկովկասի նկատմամբ, որպես ռազմա-ստրատեգիական կարևոր բազայի՝ սովետական իշխանության դեմ պայքարելու գործում:

Սովետական Ռուսաստանի կառավարությունը չունենալով անհրաժեշտ ռազմական ուժ գերմանական հարձակումը կասեցնելու համար ստիպված ընդունեց Գերմանիայի և նրա դաշնակիցների ներկայացրած վերջնագիրը: Սովետական պատվիրակությունը պայմանագիրը ստորագրեց չդադարեցվող պատերազմական գործողությունների պայմաններում:

Սովետական պատմաբանների մի մասը այն կարծիքին է հայտնել, թե եթե չլիներ Անդրկովկասի հակահեղափոխական կոալիցիայի Բրեստի պայմանագիրը մերժելու քաղաքականությունը, ապա թուրքերը հնարավորություն չէին ունենա զավթել նշված մարզերը, որովհետև պայմանագրով նախատեսվում էր նրանց տալ ինքնավարություն: Կարծում ենք, որ այդպիսի ենթադրության համար հիմքեր չկան, որովհետև սովետական պատվիրակության հայտարարությունից պարզորոշ երևում է, որ Ռուսաստանից այդ շրջանները բռնի կերպով անջատվում էին հօգուտ թուրքերի: Այդպես է ուղղակիորեն նշված նաև 1918 թ. մարտի 2-ին Անդրկովկասի կառավարությանը ուղարկված Կարախանի հեռագրում. ,,Փետրվարի 21-ի վերջնագրի հետ համեմատած նոր առաջարկությունը պարունակում է վերջնական ժամկետ: Դրա, ինչպես նաև գերմանացիների կողմից ռազմական գործողությունները դադարեցնելու մերժման հետևանքով, մենք որոշեցինք պայմանագիրը, որը դեռևս քննարկվում է, ստորագրել... Ամենալուրջ վատթարացումը փետրվարի 21-ի պայմանների՝ Արդահանի, Կարսի և Բաթումի մարզերի հափշտակումն է

Ռուսաստանից՝ ինքնորոշման անվան տակ,,[1]:

Բրեստի հաշտության պայմանագրի նկատմամբ Անդրկովկասի քաղաքական կուսակցություններն ու հասարակական կազմակերպությունները տարբեր դիրքորոշում հանդես բերեցին:

Քննադատելով հակահեղափոխական կուսակցությունների գործունեությունը, մեր պատմագրությունը առանց որևէ վերապահումների միանգամայն ճիշտ է համարում Բրեստի պայմանագրի կապակցությամբ բոլշևիկների երկրային կոմիտեի ի հայտ բերած դիրքորոշումը: Ուսումնասիրողների մեծագույն մասը պաշտպանելով համընդհանուր ճանաչում գտած այն տեսակետը, թե Անդրկովկասի ներքին և արտաքին պայմանները թելադրում էին անվերապահորեն ընդունել Բրեստի հաշտության պայմանագիրը, սակայն չեն փորձել բացահայտել բոլշևիկյան երկրային կոմիտեի այն հակասական, տատանվողական դիրքորոշումը, որ հանդես բերեց վերջինս Բրեստի պայմանագրի հետևանքով Անդրկովկասում առաջացած իրադարձություններին:

Կովկասյան երկրային կոմիտեն սկզբնական շրջանում ոչ միայն հնարավոր, այլև անհրաժեշտ էր համարում երկրամասի սահմանները ներխուժած թուրքական զավթիչների դեմ հեղափոխական պատերազմ հայտարարել:

Սակայն, որոշ ժամանակ անց բոլշևիկների երկրային կոմիտեն միանգամայն կտրուկ շրջադարձ է կատարում:

Մեկ այլ բանաձևում, դարձյալ նվիրված ընթացիկ մոմենտին, երկրային կոմիտեն հայտարարելով սովետական իշխանության պաշտպանման համար համաշխարհային իմպերիալիզմի դեմ պայքարելու իր վճռականության մասին, միևնույն ժամանակ ընդգծվում էր ,,վճռականորեն մերժել որոշ կուսակցությունների կողմից առաջ քաշված Կարսի, Արդահանի և Բաթումի՝ Անդրկովկասի համար ,,էական,, կարևոր մարզերի պահպանման համար լոզունգը՝ այն դիտելով որպես Անդրկովկասյան բուրժուազիայի իմպերիալիստական ձգտավորությունների /Տս- / արտահայտություն: Չճանաչելով ոչ մի սահման համաշխարհային և մասնավորապես թուրքական իմպերիալիզմի դեմ հեղափոխական մարտում՝ պաշտպանել բոլոր ազգերի ինքնորոշման սկզբունքը՝ դրան ենթարկելով նաև Կարսի, Արդահանի և Բաթումի սանջակի լուծումը,,[2]:

Հավանելով բանաձևին, և չկասկածելով նրա ճշմարտությանը, ռազմական պատմաբան Ա. Կադիշևը եզրակացնում է, որ ,,Անդրկովկասյան կառավարությունը թուրքական զավթիչների դեմ դուրս էր գալիս ոչ թե սոցիալիզմի դրոշով, այլ Անդրկովկասի որոշ մարզեր իրեն պահելու նպատակով՝ բոլորովին անգիտանալով այդ մարզերի ազգերի ինքնորոշման իրավունքը,,[3]: Տարօրինակ պահանջ: Համաձայն այդ պահանջի Կարսը պետք է ինքնորոշվեր Հայաստանից:

---------------

1 Документы и матеріалы по внешней политике Закавказья, Тб.1919г. стр. 85.

2 ՄԼԻ ՀՄԱ Ֆ. 4007, ց.2, գ. 95, թ. 3-4:

3 А.Б.Кадишев, Интервенция и гражданская война в Закавказье, М., 1960г., стр. 61

Ստ. Շահումյանը Բաքվի սովետի 1918 թ. հունիսի 7-ի նիստում ունեցած ելույթում նշում է, որ ,,փոխհարաբերությունները պետությունների միջև որոշվում են ոչ թե թղթի կտորներով, այլ ուժերի ռեալ հարաբերակցությամբ:

Ինչ էր խանգարում Անդրկովկասին չիրագործել այդ պայմանագիրը և պաշտպանել իրեն նրանից:

Մենք, բոլշևիկներս, երբեք չենք հայտարարել, անգամ երբ ստորագրել ենք այդ պայմանագիրը, որ այստեղ պետք է անպայման այն պահպանել:Մենք այդ պայմանագիրը դիտել ենք որպես պարտադրված պայմանագիր, որը պետք է հաշվի առնենք, քանի որ դիմադրություն ցույց տալու համար պահանջված չափով ուժ չունենք:

Երբ մեր առաջ այստեղ հարց դրվեց, թե ինչպես վարվել Բրեստի պայմանագրին և պե՞տք է արդյոք մեր կողմից որևէ հայտարարություն արվի Բրեստի պայմանագրի կատարման մասին,- մեր պարտիան միաձայն որոշեց Կարսը, Բաթումը և Արդահանը հանձնելու մասին ոչ մի հայտարարություն չանել, և իրոք ոչ մի հայտարարություն չարինք:

Որպես կենտրոնական իշխանության պաշտոնական ներկայացուցիչ, ես անձամբ պետք է հայտնեի իմ կարծիքը, բայց այդ առթիվ մենք հանդես չեկանք, ենթադրելով, որ Կարսն ու Բաթումը պաշտպանելու համար Անդրկովկասը բավականաչափ ուժ ունի:

Մենք մտանանշում էինք, որ Անդրկովկասն այնպիսի պայմանների մեջ է գտնվում, որ ամբողջ բնակչությունը՝ առանց ազգության խտրության,կկռվի, որպեսզի պաշտպանի իրեն թուրքերից, որովհետև նրանք Անդրկովկասում ամբողջ ազգություններ կոչնչացնեին...

Նկատի առնելով նաև, որ մեր դեմ էին շարժվում ոչ թե գերմանական ուժեղ զորքերը, այլ հոգնած ու կազմալուծված թուրքերը, մենք կարծում էինք, որ Անդրկովկասը կարող է իրեն պաշտպանել և չտալ այն, ինչ որ գրջված է Բրեստի պայմանագրով:

Երբ մենք հարց դրինք, թե ինչպես կվերաբերվի դրան կենտրոնական կառավարությունը, որը ստորագրել է Բրեստի պայմանագիրը, մեզ համար պարզ էր, որ կառավարությունը կարող է միայն ողջունել կովկասյան հերոսներին,,[1]:

Սակայն այդպես չէին մտածում Թիֆլիսի երկրային կոմիտեի անդամների մեծամասնությունը:

Անդրկովկասի հակահեղափոխական կուսակցությունները սկզբից ևեթ մերժեցին Բրեստի պայմանագիրը: Այդ կուսակցությունների ֆրակցիաների հանձնարարությամբ Սեյմը որոշում ընդունեց Բրեստի պայմանագիրը Անդրկովկասի վերաբերմամբ համարել անօրինական և չճանաչել: Սեյմի լիազորությամբ Անդրկովկասյան կառավարությունը հայտարարեց, որ ,,.... յու-

---------

1 Ստ.Շահումյան, Երկեր, հ.3, էջ 274-275:

րաքանչյուր պայմանագիր, որը վերաբերվում է Անդրկովկասին և նրա սահմաններին, ստորագրված առանց նրա գիտության և հավանության, զրկված է միջազգային նշանակությունից և նրա համար պարտավորեցուցիչ ուժից„[1]:

Ի հակադրություն այդ կուսակցությունների, ադրբեջանական մուսավաթականները պահանջում էին անառարկելիորեն ճանաչել Բրեստում ստորագրված պայմանագիրը, դրանում տեսնելով թուրքական օգնության գրավականը: Ճիշտ է, սկզբնական շրջանում չունենալով բավարար ուժ բացահայտ կերպով հանդես գալու այդօրինակ պահանջով, ինչպես նաև մենշևիկների համաձայնությունը, նրանք առերևույթ հանդես էին գալիս իրենց չեզոքության վերաբերյալ հայտարարություններով: Բայց իրականում նրանք քիչ ջանքեր չգործադրեցին հեշտացնելու թուրքերի կողմից Կարսի, Բաթումի և Արդահանի մարզերի, այլև երկրամասի մնացած շրջանների գրավման համար: Դեռ 1918 թվականի մարտի 25-ի Սեյմի նիստում մուսավաթական ֆրակցիայի անունից Մեխտիևը հայտարարում էր, որ եթե Սեյմը չհռչակի Անդրկովկասի անկախությունը և շարունակի հրաժարվել Բրեստի պայմանագրի պահանջները կատարելուց, այդ դեպքում մուսուլմանական ֆրակցիան կհրաժարվի հաշտության բանակցություններին աջակցելուն[2]:

Պետք է նշել, որ ինչպես փետրվարյան, այնպես էլ հոկտեմբերյան հեղափոխությունից հետո ընկած շրջանի պատմության ուսումնասիրողները հարկ եղած չափով ուշադրություն չեն դարձրել Անդրկովկասում մուսավաթականների կատարած քայքայիչ գործունեության լուսաբանմանը: Միայն ընդհանուր գծերով է խոսվում նրանց թուրքական օրիենտացիայի և թուրքերին ցույց տրված օգնության մասին: Որոշ ուսումնասիրություններում խոսք է գնում ոչ թե մուսուլմանական ընդհանուր շարժման մասին, այլ առանձին բանդաների՝ դրանով իսկ ներկայացնելով այն ոչ այլ ինչ, քան թալանով զբաղված ավազակային խմբեր, որի հետևանքով անտեսվում է հայկական զորամասերի թիկունքում մուսուլմանական շարժումների, մուսավաթականների և Թուրքիայի միջև եղած սերտ կապերի առկայությունը:

„Դաշնակցականները /Բաքվի/ Թիֆլիսից հաղորդում են ստացել,- ժողովրդական կոմիսարների խորհրդին գրում է Ստ.Շահումյանը,- թե իբր Բաթումում վրացիներին ավտոնոմիա են խոստանում՝ Վիլհելմի պրոտեկտորատով: Մնացած ամբողջ Անդրկովկասը պետք է ներկայացնի ավտոնոմ Ադրբեջան„[3]:

Բրեստի պայմանագրի նկատմամբ բացասաբար վերաբերվեց նաև Դաշնակցություն կուսակցությունը: Եվ ինչու դաշնակցականները չընդունեցին

---

[1] [illegible]кументы [illegible] ма[illegible]риалы, стр. [illegible]

[2] [illegible]յն տեղում, [illegible] 142:

[3] Ստ. Շահումյան, Երկեր, հ. [illegible], [illegible] 2[illegible]0:

Բրեստի պայմանագիրը, մեր պատմագրության մեջ բացատրվում է դարձյալ նույն ձևով, ինչպես մեկնաբանվել է մնացած հակահեղափոխական կուսակցությունների դիրքորոշումը:

Հ.Էլչիբեկյանը այնպիսի տեսակետ է զարգացնում, որի համաձայն ազգային զորամասեր էին կազմակերպվել ոչ թե արտաքին թշնամիների /իմա՝ Թուրքիայի/ դեմ կռվելու, այլ հեղափոխական շարժումները ճնշելու և Ազգային խորհրդի գերիշխանությունը ամրապնդելու համար և նույնիսկ պնդում է, թե ազգային զորամասերը չեն մասնակցել թուրքական բարբարոսների դեմ ժողովրդի կողմից տարերայնորեն մղված ինքնապաշտպանության մարտերին[1]: Նույն հարցի վերաբերյալ սխալներ են տեղ գտել Ա. Պողոսյանի աշխատության մեջ:

Ամենացիչը տարօրինակ է, որ հայկական ազգային զորամասերը, որոնց ճնշող մեծամասնությունը մարտնչել էր ռուսական զորամասերի հետ կողք-կողքի, դիտում է որպես խմբապետներից կազմված և խեղաթյուրում այդ զորամասերի գործունեությունը: Ա. Պողոսյանը խոսելով Սարիղամիշի անկման պատճառների մասին, հետևյալն է գրել. ,,Դաշնակցական ավանդույթների բաժանմունքներ քանակից – նման ծանր իրադրության մեջ, այլ բան սպասել չէր կարելի: Ավարի ու թալանի սովոր խմբապետների համար լուրջ մարտում փախուստը ցերեզասելի է եղել,,: Բոլորովին սխալ է մեկնաբանել նաև Կարսի անկման փաստը: Կարծես հեղինակին հայտնի չէ Կարսի հանձնման ամբողջ պատմությունը: Աղավաղելով իրական փաստերը Ա.Պողոսյանը գրում է, որ երբ ,,Թուրքական զորքերը, չունենալով համապատասխան ուժեր/sic/ նույնիսկ նշանակված ժամկետում չկարողացան գրավել ամրությունները /sic/: Փախուստի դիմած դաշնակ ճիվաղներն ստիպված եղան ամրությունների զգամման մասին տեղյակ պահել Թուրքերին, որպեսզի արագացվի նրանց կանոնավոր զորքերի մուտքը[2],,:

Անհրաժեշտ ենք համարում նշել, որ հայ զինվորները Կարսի ճակատում կռվել են անձնուրաց կերպով: Ահա թե ինչ է պատմում ականատեսը. ,,Բոլոր դեպքերում,- գրել է Կարսի կռիվների մասնակից,ռուսական կամավորական ջոկատի հրամանատար Եֆրեմովը,- Բեգլի-Ահմեդի մոտ ես հետևել եմ հայկական զորամասերին, որոնք արդեն հակահարձակման էին գնում և այդ այն դեպքում, երբ դեռ Զարաուրգանում և Կարսղուղղում լքել էին իրենց դիրքերը և միայն հակառակորդի մոտենալու ժամանակ, ապրիլի 6-ին, հայկական հրաձգային առաջին գնդի զորամասերը կորցնելով Ղազի-Քոյ լեռան բարձրունքները անցնում են հակահարձակման և ետ գրավում այն, իսկ հայկական հեծելազորը թուրքերից խլում է գնդացիրները: Ծնունի հետևակային գնդի երկու վաշտերը ինձ հետ անցնում են հարձակման, ճեղքում թշնամու ճակատը և փախուստի մատնում...

-----------

1 Հ.Էլչիբեկյան,Հոկտեմբերյան Սոց.Մեծ հեղափոխ. և Սովետական իշխ.հաղթանակը, էջ 54-70:

2 Ա.Պողոսյան, Կարսի մարզը, էջ 294-300:

Երբ ապրիլի 11-ին Կարսից դուրս էին բերում վիրավորներին, զինվորներից շատերը հարց էին տալիս՝ արդյոք ճի՞շտ է, որ Կարսը հանձնել են առանց կռվի, ինչո՞ւ բերդը հանձնեցին թուրքերին այն դեպքում, երբ նրանք պարտվել էին և անկամ փախուստի դիմել: Այդ հարցումների ժամանակ շատ հաճախ արցունքներ էի տեսնում զինվորների աչքերում,,[1]:

Համանման տեսակետ է պաշտպանում նաև Խ.Բադալյանը: Դեռ ավելին. նա գտնում է, որ ,,այն ժամանակ, երբ թուրքական զավթիչները ավերում էին Հայաստանը, դաշնակցականները, որպես օտարերկրյա զավթիչների հավատարիմ գործակալներ /իմա՝ թուրքերի/, շարունակում էին իրենց նենգ քաղաքականությունը՝ օգնելով գերմանա-թուրքական զավթիչներին,,[2]:

Այս հարցի նկատմամբ այլ մոտեցում է հանդես բերել Ա.Կաղիշը: Նա նշում է, որ թուրքական ներխուժումը Անդրկովկաս կապված էր ավստրո-գերմանական ինտերվենցիայի հետ և հանդիսանում էր գերմանական ստրատեգիական համընդհանուր պլանի մի մասը, ընդգծելով այն հանգամանքը, որ թուրքերը Անդրկովկասում հետապնդում էին նաև իրենց հատուկ նպատակները[3]:

Կարծում ենք, որ դաշնակցականների՝ Բրեստի պայմանագրի նկատմամբ ունեցած վերաբերմունքի ճիշտ կամ սխալ լինելու հարցը պետք է քննարկվի Թուրքիայի փայփայած մտադրությունների բացահայտմամբ:

Վերջին տասնամյակում լույս տեսած մի շարք ուսումնասիրություններում բավարար չափով բացահայտված է թուրք-գերմանական զավթիչների նվաճողական ձգտումներն Անդրկովկասի նկատմամբ:

Թուրքական բարբարոսները բնավ մտադրություն չունեին բավարարվել միայն Բրեստի պայմանագրով ձեռք բերած նվաճումներով, այլ ամեն կերպ աշխատում էին գրավել ամբողջ Անդրկովկասը և դրանով իսկ վերացնել այն լուրջ խոչընդոտը, որը մեծ չափով խանգարում էր իրականացնել իրենց պանիսլամական աշխարհակալ նկրտումները:

Թե Թուրքիան և թե Գերմանիան ամենևին մտադրություն չունեին կատարել Բրեստի պայմանագրով սահմանված պարտավորությունները:

Թուրքական արշավանքը Անդրկովկասի ժողովուրդներից ամենից շատ վտանգի տակ էր դնում հայ ժողովրդի արևելյան հատվածի ֆիզիկական գոյությունը: Դիտելով որպես իրենց պլանների իրականացման ճանապարհին եղած ամենալուրջ խոչընդոտը, թուրքական բարբարոսները աշխատում էին ոչնչացնել հայ ժողովրդի վերջին մնացորդները: Ենթադրում ենք, որ այդ է պատճառը, որ Մոսկվա ժամանած Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդի պատվիրակությանը սովետական կառավարությունը բոլոր հնարավոր միջոցները տրամադրեց, որպեսզի այդ պատվիրակությունը ռազմաճակատի գծով անցներ Արևմտյան Եվրո-

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց. 1-ին, գ.136, թ. 126-127

2 Խ.Բադալյան, Դաշնակցականների կոնտրռևոլյուցիոն գործունեության մի քանի փաստերի մասին /1918-1920 թթ./, Ե., 1955, էջ 7:

3Ա.Կաղիշև, նշվ. աշխ. էջ 37:

պա, և մասնավորապես Գերմանիա, թուրքական արշավանքը կասեցնելու համար[1]:

Թուրքերի կողմից Արևելյան Հայաստանի մեծագույն մասի զավթման պատճառը պետք է որոնել ոչ թե Բրեստի պայմանագիրը մերժելու մեջ, այլ այն բանի, որ տվյալ պահին երկրի ղեկավարությունը ստանձնած Դաշնակցություն կուսակցությունը անընդունակ գտնվեց համախմբելու տարերայնորեն պայքարի ելած ժողովրդական զանգվածների ուժերը, կազմակերպված հունի մեջ դնելու այն՝ թուրքական զորամասերին արժանի հակահարված տալու համար: Տատանողական քաղաքականության շնորհիվ դաշնակցականները ոչ միայն ի վիճակի չեղան գլխավորելու ժողովրդի պայքարը, այլև նկատելի չափով հուսալքում առաջ բերեցին բնակչության մեջ:

Սովետահայ պատմաբանները իրավացի կերպով դաշնակցականներին մեղադրելով հայ ժողովրդի ազգային շահերին դավաճանելու համար, անառարկելիորեն ցույց են տվել, որ արևելահայերը ֆիզիկական բնաջնջումից փրկվեցին շնորհիվ ժողովրդի հերոսական պայքարի, որի պսակը հանդիսացան Սարդարապատում, Աբարանում և Ղարաքիլիսայում արյունահեղ մարտերում տարած հաղթանակները:

Սակայն մինչև վերջերս թուրքական զավթիչների դեմ Սարդարապատում և այլուր տեղի ունեցած հերոսամարտերը ինչպես հարկն է չէին գնահատվում:

Սայմի լուծարքից հետո Անդրկովկասյան միացյալ պատվիրակության փոխարեն Թուրքական պատվիրակության հետ անջատ բանակցություններ են վարում ազգային պատվիրակությունները: Թիֆլիսի Հայոց Ազգային Խորհրդի պատվիրակությունը, որը գրեթե բացառապես կազմված էր դաշնակցականներից, մայիսի 28-ին ընդունում է թուրքական զավթիչների վերջնագիրը և 1918 թ. հունիսի 4-ին ստորագրում Հայաստանի համար չափազանց ծանր, ստրկացուցիչ պայմանագիր, որի հետևանքով Հայաստանը զրկվում է ոչ միայն ռուսական բանակի կողմից Արևմտյան Հայաստանի ազատագրված մարզերից, այլև այն տարածքից, որը երբեք Թուրքիայի տիրապետության տակ չէր եղել:

Ինչպես նշել է պատմական գիտությունների դոկտոր Ե.Սարգսյանը, ժողովուրդը դժգոհությամբ ընդունեց Բաթումում ստորագրված պայմանագիրը և չդադարեցրեց զինված պայքարը թշնամու դեմ, չնայած աջակցություն չէր ստանում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից:

Այսպիսով, 1918 թ. կեսերի իրադարձությունները ակնբախորեն ցույց տվեցին, որ հայ հասարակական քաղաքական կյանքի ղեկի մոտ կանգնած ազգայնական կուսակցությունները և մասնավորապես Դաշնակցությունը անկարող էին գտնվել իրականության առաջադրած բարդության մակարդակի վրա և փաստորեն ընթանում էին իրադարձությունների ետևից, չկարողանալով,

---------

1 ՄԼԻ ՀՄԱ, ֆ.4047,գ.230,նաև ՀՍՍՀ ԿՊՊԱ ֆ.222,ց.1-ին,գ.10,թ.115-116:

ավելի ճիշտը բոլորովին ցանկություն չցուցաբերեցին փոխելու դրանց ընթացքը՝ հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը պաշտպանելու համար:

Սովետահայ պատմագրությունը համոզիչ կերպով ցույց է տվել, որ խնլամիտ գործունեության դեպքում հայ ժողովուրդը ի վիճակի էր ոչ միայն կասեցնելու թուրքական բարբարոսների ավերիչ արշավանքը երկրի բուն կենտրոնում, այլև միանգամայն հնարավոր էր լավագույն պաշտպանություն կազմակերպելու դեպքում անառիկ պահել երկրի սահմանները օտար ներխուժումներից:

## ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1918 թ. մայիսի 26-ին Անդրկովկասյան Սեյմը լուծարքի ենթարկվեց, որով երևութապես գոյություն ունեցող Անդրկովկասյան օրապակաս ,,Ֆեդերացիան,, քայքայվեց և նրա փլատակների վրա ստեղծվեցին ազգային հանրապետությունները:

Ինչպես իրավացիորեն նշվում է պատմագրության մեջ Անդրկովկասի տիրապետող դասակարգերի ներսում եղած քաղաքական-տնտեսական ու ազգային հակասությունները, որոնց արտահայտիչներն էին ազգայնական կուսակցությունները, ի վերջո հանգեցրին երկրամասի բաժանմանը, միմյանց նկատմամբ խորը թշնամանքով տրամադրված ազգային հանրապետությունների ձևով:

Հայաստանի բուրժուական հանրապետության կարճատև գոյության ընթացքում դաշնակցական կառավարության վարած ներքին, ավելի լրիվ սոցիալ-տնտեսական քաղաքականությունը մեր պատմագրության կողմից դեռևս լիակատար կերպով չի լուսաբանվել, առանձին հետազոտության առարկա չի հանդիսացել:

Հրապարակի վրա գրեթե բոլոր ուսումնասիրություններում դաշնակցություն կուսակցության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը բացատրվել, լուսաբանվել է այնքանով, որչափով այն առնչվել է հեղափոխական շարժումների, սովետական իշխանության համար մղված պայքարի պատմության ամենաբազմազան հարցերի հետ:

Վերը ասվածից ինքնին չպետք է մակաբերել, թե մեր պատմագրությունը շատ քիչ գործ է կատարել այդ ուղղությամբ, բայց միաժամանակ պետք է ընդունել, որ մինչև այժմ տրվածը հրամայաբար կարիք ունի լուրջ լրացումների:

Չնայած զգացվող պակասին, սովետահայ պատմաբաններին հաջողվել է ընդհանուր գծերով պատկերել կառավարող կուսակցության՝ Դաշնակցության սոցիալ-տնտեսական քաղաքականությունը:

Անցնելով իշխանության գլուխ դաշնակցականները ավելի քան երկու տարվա ընթացքում չկարողացան կանոնավոր պետական իշխանության վարչա-

պարատ ստեղծել: Նրանք պահպանեցին ժամանակավոր կառավարությունից և Անդրկովկասյան կոմիսարիատից ժառանգություն ստացած տեղական կառավարչական ապարատը; Իրենք, դաշնակցական ղեկավար գործիչներն են խոստովանում, որ չնայած Հայաստանը հռչակված էր հանրապետություն, բայց ,,ասել, թե Հայաստանը գործնականում զուտ ռամկավար հանրապետություն էր, կլիներ սխալ,,[1]: Հայաստանում սկզբնական շրջանում Գերագույն խորհուրդը, իսկ 1919 թ. կեսերից նորընտիր պառլամենտը իրականում ձևական բնույթ էին կրում և օժտված չէին իշխանությամբ: Իշխանության ղլուխ անցնելուց անմիջապես հետո դաշնակցականները հաստատեցին իրենց կուսակցության դիկտատուրան:

Ընդհանրապես իրենց ամբողջ տիրապետության ընթացքում դաշնակցականները չկարողացան երկրում վերջ տալ սովի պայմաններին: 1919 թ. գարնանը և հետագայում ձեռնարկված մի շարք միջոցառումների հետևանքով որոշ չափով թեթևացավ պարենային ճգնաժամը:

Ծանր դրության մեջ էին գտնվում նաև գաղթական որբ մանուկները: 1917 թ. միայն Հայաստանում հայ հասարակության միջոցների հաշվին բացվել էր 93 որբանոց 6693 որբերով: Սակայն թուրքական արշավանքի հետևանքով որբանոցների թիվը կրճատվեց մինչև 25-ի՝ 2250 որբերով, իսկ Վրաստանում գործում էր 27 որբանոց 1950 որբերով: Թուրքերի կազմակերպած զանգվածային կոտորածների հետևանքով որբ երեխաների թիվը բազմապատիկ անգամ ավելանում է: Այսպես, պաշտոնական տվյալներով 1919թ. ապրիլին որբերի թիվը անցնում էր 14 հազարից[2]:

- 000 -

Սովետահայ պատմագրությունը որոշ չափով ուշադրություն է դարձրել դաշնակցական կառավարության արտաքին քաղաքական կուրսի լուսաբանմանը: Ճիշտ է, դեռևս այդ հարցի վերաբերյալ հատուկ ուսումնասիրություններ չկան, բայց հրապարակի վրա եղած աշխատություններում գրեթե բացահայտված է դաշնակցական կառավարության արտաքին քաղաքականության բուն էությունը, նրա կողմնորոշումը դեպի արևմտյան իմպերիալիստական երկրները, թշնամական վերաբերմունքը Սովետական Ռուսաստանի նկատմամբ. նրանց կապը հակառուսական սպիտակգվարդիական գեներալների հետ և այլն: Միևնույն ժամանակ մեծ տեղ է հատկացվել Անտանտայի երկրների, գլխավորապես Անգլիայի և ԱՄՆ-ի Անդրկովկասի նկատմամբ իմպերիալիստական, գաղութային քաղաքականության բացահայտմանը, քաղաքականություն, որի հիմնական նպատակն էր իրենց գերիշխանությունը հաստատել Անդրկովկասում, աջակցել տեղի ազգայնական կուսակցություններին բանվոր

---------------

1 Ս.Վրացյան, Խարխափումներ, Բոստոն, 1924, էջ 49:
2. ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 20 , ց.1, գ. 427, թ. 7-8:

դասակարգի և գյուղացիության հեղափոխական շարժումների դեմ պայքարելու գործում, նրանց ներգրավել հակասովետական խմբավորման մեջ և մասնակից դարձնել սովետական Ռուսաստանի դեմ ծավալված պայքարին:

Սակայն պատմական գրականության մեջ շատ քիչ ուշադրություն է դարձվել Անդրկովկասի հանրապետությունների փոխհարաբերությունների լուսաբանմանը: Փաստորեն ուսումնասիրողները բավարարվել են այդ երկրների միջև գոյություն ունեցող թշնամական հարաբերությունները բացատրել հավասարապես բոլոր կառավարող կուսակցությունների արտաքին զավթողական և ներքին շովինիստական-մեծապետական քաղաքականությամբ, չփորձելով ցույց տալ, թե ինչումն է կայանում դաշնակցականների զավթողական քաղաքականությունը:

Սովետահայ պատմագրության կողմից քննարկման առարկա է հանդիսացել նաև դաշնակցական կառավարության և ռուսական սպիտակգվարդիականների միջև ստեղծված փոխհարաբերությունները: Մատնանշվել է, որ թշնամաբար տրամադրված լինելով դեպի սովետական իշխանությունը, դաշնակցականները սերտ փոխհարաբերությունների մեջ էին մտել սկզբում Կոլչակի, ապա Դենիկինի և վերջապես Վրանգելի սպիտակգվարդիական իշխանությունների հետ և պարտավորություն էին ստանձնել աջակցել վերջիններին սովետական իշխանության դեմ մղվող պայքարում: Ցույց է տրվել, որ սպիտակգվարդիական գեներալները Անդրկովկասում ստեղծված ազգային հանրապետությունները դիտում էին որպես ժամանակավոր երևույթ և նախկինի նման Անդրկովկասը համարում էին միասնական Ռուսաստանի անբաժանելի մասը: Դենիկինը իր ներկայացուցիչներն ուներ այդ հանրապետություններում, որոնք ակտիվ աշխատանք էին տանում Անդրկովկասում մնացած ռուս սպաներին հավաքագրելու և Դենիկինի տրամադրության տակ ուղարկելու համար:

- 000 -

Անցած տասնամյակների ընթացքում սովետահայ պատմաբաններին հաջողվել է իր ամբողջության մեջ լուսաբանել Հայաստանում բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական շարժումները տիրող բուրժուական իրավակարգի դեմ, շահագործողական դասակարգերի տիրապետության տապալման համար, հանուն սոցիալիստական հեղափոխության հաղթանակի;

Արդեն մեր կողմից բազմիցս հիշատակված Գ. Ղարիբջանյանի, Գ.Գալոյանի, Հ.Էլչիբեկյանի, Մ.Կարապետյանի, Ծ.Աղայանի և այլոց մենագրություններում մանրակրկիտ կերպով հետազոտվել է 1918–1920 թթ. ընթացքում տեղի ունեցած բանվորական գործադուլներն ու քաղաքական այլ ելույթները, գյուղացիության ագրարային ընդվզումները:

Պիտի ընդունել նաև, որ մի շարք պատճառների, առաջին հերթին բոլշե-

վիկյան կազմակերպությունների թուլության հետևանքով, թե բանվորական և թե գյուղացիական հեղափոխական սակավաթիվ ելույթները սկզբնական շրջանում կրում էին տարերային, անկազմակերպ բնույթ: Իսկ այդ հնարավորություն էր տալիս դաշնակցական կառավարությանը, շատ հաճախ միայն դատարկ խոստումներով, առանց դժվարության վերջ տալու գործադուլային պայքարին, գյուղացիական հուզումներին:

Ուսումնասիրություններում բերված փաստերի համադրումը բերում է այն համոզման, որ մինչև մայիսյան ապստամբությունը բանվորական և գյուղացիական հակադաշնակցական ելույթները արտահայտվում էին առավելապես տնտեսական պայքարի ձևով, որը զուգորդվում էր քաղաքական պահանջներով: Աշխատավորական զանգվածները մեծամասնությունը չէր պաշտպանում դաշնակցական կառավարության ներքին և արտաքին քաղաքականությունը:

Պատմաբանների ուշադրության կենտրոնում է գտնվել Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության բազմակողմանի լուսաբանումը: Բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը ավելի հանգամանորեն լուսաբանվել են Գ.Ղարիբջանյանի, Ա. Կարապետյանի աշխատություններում, իսկ կոմկուսի կազմակերպչական ձևավորման հարցերը գոհացուցիչ խորությամբ քննարկվել է Խ.Բարսեղյանի համանուն մենագրության մեջ: Ցույց է տրվել, որ ռուսական բանակի էվակուացման, թուրքական ավերիչ արշավանքի հետևանքով բոլշևիկյան կազմակերպությունները հարկադրված դադարեցնում են իրենց գործունեությունը: Կուսակցական կազմակերպությունների վերականգնման աշխատանքները կապված էին մեծ դժվարությունների հետ, ուստի և շատ դանդաղ էր ընթանում: Գլխավոր պատճառը ոչ միայն դաշնակցականների ստեղծած քաղաքական ծանր ռեժիմն էր, այլև երկրի տնտեսական խիստ հետամնացությունը և դրա հետ կապված արդյունաբերական պրոլետարիատի բացակայությունը:

Ուսումնասիրողների մեծագույն մասն այն կարծիքին են, որ բոլշևիկյան կազմակերպությունների վերականգնման աշխատանքներն սկսվել են 1918թ.: Դրանով հանդերձ նրանք չեն ժխտում, որ կազմակերպությունների վերականգնման և ձևավորման աշխատանքները հիմնականում սկսվել են 1919 թ. ամառվանից՝ երկրային կոմիտեի նախաձեռնությամբ Հայաստան ուղարկված մի խումբ բոլշևիկների կողմից: Բացառությամբ Երևանի և Ալեքսանդրապոլի կազմակերպությունների, Հայաստանի մնացած վայրերում կուսկազմակերպություններ ստեղծվել են 1919 թ. կեսերից և 1920 թվին:

Հեղափոխական շարժումների նկատելի աճը հրամայական պահանջ էր առաջադրում միավորել Հայաստանում եղած կուսկազմակերպությունների գործունեությունը: Միասնական կենտրոնի բացակայությունը բացասաբար էր անդրադառնում հեղափոխական շարժումների վրա, չէր կոորդինացվում կուսկազմակերպությունների աշխատանքը:

Երկրային կոմիտեի կողմից Հայաստան գործուղված բոլշևիկ գործիչների /Ս.Կասյան, Ա.Մռավյան, Ս.Մարտիկյան/ բեղուն աշխատանքի շնորհիվ հնարավոր է դառնում 1919 թ. սեպտեմբերին հրավիրել բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդակցություն:

Ինչպես նշվել է պատմագրության մեջ, և այդ ավելի ծավալուն կերպով կատարել է Ս.Կարապետյանը, սեպտեմբերյան խորհրդակցությունում ընթացիկ մոմենտի մասին զեկուցման շուրջը տարաձայնություններ են առաջացել բուրժուական պառլամենտին մասնակցելու և դաշնակցական վարչակարգի նկատմամբ ունենալիք վերաբերմունքի կապակցությամբ: Նա իրավամբ նկատում է, որ խորհրդակցությունը ոչ ճիշտ որոշում ընդունեց՝ արգելելով կուսկազմակերպություններին մասնակցել պառլամենտական ընտրություններին:

Խորհրդակցությունը կուսկազմակերպությունների ուշադրությունը սևեռեց հասարակական կազմակերպություններում, հատկապես արհմիություններում և գյուղացիական կոոպերատիվներում, տարվող աշխատանքը կազմակերպված հունի մեջ դնելու համար: Հասարակական կազմակերպություններում բոլշևիկների կողմից տարվող աշխատանքը համեմատաբար ավելի խորը կերպով լուսաբանվել է Ս. Կարապետյանի մենագրության մեջ:

Պատմա-կուսակցական գրականության մեջ իրավամբ բարձր է գնահատվել հունվարյան կոնֆերանսի նշանակությունը, որով փաստորեն ավարտվեց Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների միավորումը: Նշվել է, որ Արմենկոմի կողմից լայն նախապատրաստական աշխատանքներ տարվեցին կոնֆերանսը բարձր մակարդակով անցկացնելու ուղղությամբ: Նախապես Արմենկոմի ներկայացուցիչների մասնակցությամբ անցկացվեցին գավառային կազմակերպությունների կոնֆերանսներ: Կոնֆերանսի քննարկմանն է ներկայացվում Արմենկոմի հաշվետու զեկուցումը, ընթացիկ մոմենտի, կուսակցական կազմակերպությունների կառուցվածքի, հասարակական կազմակերպություններում տարվող աշխատանքների և այլն հարցերը: Ինչպես նշել է Ա.Մելքոնյանը, կոնֆերանսն ընդունել է քաղաքական երեք փաստաթուղթ. ա. լեգալ կազմակերպությունների աշխատանքի ծրագիր, բ. թեզիսներ ընթացիկ մոմենտի և պարտիայի տակտիկայի վերաբերյալ և գ. կազմակերպչական կանոնադրություն:

Փաստացիորեն ապացուցված է, որ Ա.Նուրիջանյանի կողմից ներկայացված բանաձևը, որը հետագայում նա հրատարակեց որպես հունվարյան կոնֆերանսում ընդունված բանաձև և ուսումնասիրողների ճնշող մեծամասնության կողմից ընդունվել է որպես այդպիսին, հունվարյան կոնֆերանսում մերժվել է: Ա.Մելքոնյանը և Խ.Բարսեղյանը, իսկ նրանցից շատ առաջ Ս.Կասյանը, անառարկելիորեն ցույց են տվել, որ հիշյալ բանաձևը Ալեքսանդրապոլի կազմակերպության բանաձևն է և մերժվել է հունվարյան կոնֆերանսի կողմից: Չնայած այդ իրողությանը, այդ բանաձևը անհարկի կերպով ցայսօր

շրջանառության մեջ է դրվում ուսումնասիրողների կողմից, որպես հունվարյան կոնֆերանսի կողմից ընդունված բանաձևի:

Ուսումնասիրություններում որոշակի կերպով ցույց է տրվել, որ հունվարյան կոնֆերանսը միանգամայն ճիշտ էր նպատակադրում կազմակերպությունների գործունեությունը՝ լայն նախապատրաստական աշխատանք տանել և պատրաստ լինել Անդրկովկասի հանրապետություններից որևէ մեկում սովետական կարգեր հաստատվելուց հետո դաշնակցականների տիրապետությունը տապալելու համար:

- 000 -

Քաղաքացիական կռիվներում Սովետական Ռուսաստանի տարած հաղթանակները և Կարմիր բանակի անմիջական մերձեցումը Անդրկովկասի սահմաններին, Սովետական իշխանության հաստատումը Ադրբեջանում հսկայական հեղափոխականացնող ազդեցություն ունեցավ Հայաստանի աշխատավորական լայն զանգվածների վրա: Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում օրակարգի հարց դարձավ: Դաշնակցականների տիրապետության դեմ բոլշևիկյան կազմակերպությունների գլխավորությամբ մայիսմեկյան ցույցերը վերածվեցին զինված ապստամբության, որը, սակայն, հանգամանքների բերումով հաղթանակով չպսակվեց: Այնուհանդերձ երկար տարիներ է ինչ հանրապետության պատմաբանները զբաղվում են այդ ամենազանգվածային հեղափոխական շարժման պատմության լուսաբանմամբ: Մայիսյան ապստամբությանը նվիրված աշխատությունների թիվը պատկառելի քանակ է կազմում: Բացի արդեն բազմիցս հիշատակված ընդհանուր աշխատություններից, մեծ թվով ուսումնասիրություններ են լույս տեսել նվիրված մայիսյան ապստամբությանը:

1920-ական թվականներին լույս տեսան ակադեմիկոս Աշոտ Հովհաննիսյանի, Հայաստանի կոմկուսի գործիչներ Շ.Ամիրխանյանի և Թ.Մանդալյանի աշխատությունները[1]: Այնուհետև 1930-ական թվականների կեսերին լույս տեսան Ս.Խանոյանի[2], Ա. Մելիք-Շահնազարյանի[3] և Ա.Խանջյանի[4] գրքույկները, որոնք, սակայն, պատմա-հետազոտական բնույթ չեն կրում: Այս շրջանում մայիսյան ապստամբության վերաբերյալ ուշագրավ հոդվածաշարով հանդես է եկել Կ.Ղազարյանը[5]: Որոշակի աշխատանք կատարվեց նաև մայիսյան ապստամբության մասնակիցների հուշերի և առանձին փաստաթղթերի հրատարակման ուղղությամբ[6]: 1950-ական թվականների կեսերից հրատարակ-

----------

1 Աշոտ Հովհաննիսյան,Հայաստանի հեղափոխության հուլիսն ու հոկտեմբերը:Շ.Ամիրխանյան,Մայիսյան ապստամբությունը Հայաստանում,Թ.Մանդալյան, Մայիսյան ապստամբությունը

2 Ս.Խանոյան,Մայիսյան ապստամբությունը, Ե.,1930թ.:

3 Ա.Մելիք-Շահնազարյան,Մայիսյան ապստամբությունը Հայաստանում,Ե.,1930:

4 Ա.Խանջյան,Մայիսյան ապստամբությունից դեպի նոյեմբերյան հաղթանակը,Ե.,1935թ.:

5.Տես ,,Լենինյան ուղի,, , նո.3-4, և 5, 1932թ.:

6 Մայիսյան ապստամբությունը Հայաստանում/1920-1930թթ./,1930թ.:

վում են Գ.Ղարիբջանյանի[1], Հ. Տոնոյանի[2], Գ.Գալոյանի[3] աշխատությունները։ Մայիսյան ապստամբությունը լուսաբանվել է Հ.Էլչիբեկյանի, Գ. Ղարիբջանյանի, Գ.Գալոյանի, Ս. Կարապետյանի, Ծ.Աղայանի, Ար.Մնացականյանի, Ս.Վարդանյանի մենագրություններում։ 1920թ. մայիսին Զանգեզուրում բռնված զինված ապստամբությանն է նվիրված Ս.Գ.Սողոմոնյանի աշխատությունը[4]։

Մայիսյան ապստամբության վերաբերյալ գրականության մեջ առայսօր առանձնանում են երկու աշխատություններ։ Դրանցից առաջինը, որը պատկանում է Հ.Ս.Կարապետյանի գրչին[5], ամենածավալուն և ամենակատարյալն է մյուսների համեմատությամբ։ Հեղինակին հաջողվել է տալ իրադարձությունների և դրա մասնակիցների ամենամանրամասն շարադրանքը։ Ապստամբության նշանակության գնահատման և պարտության պատճառների հարցում հեղինակը պաշտպանում է մեծամասնության կարծիքը և հաճախ շրջանցել է վիճահարույց հարցերը։ Երկրորդ աշխատությունը[6], ընդհակառակը, նվիրված է ապստամբության շուրջն առաջացած վիճելի հարցերի լուսաբանմանը։ Հեղինակը փորձել է առավելապես հայտնի փաստաթղթերի հիման վրա նոր մեկնաբանություն տալ վեճ հարուցող հարցերին և պիտի ընդունել, որ առանձին հարցերի կապակցությամբ նրան այդ հաջողվել է։ Սակայն պիտի ընդունել նաև, որ ապստամբության հիմնական հարցերը, որոնք վեճերի տեղիք են տըվել, մնում են դարձյալ այդպիսին։

Ապստամբության վերաբերյալ պատմագրության մեջ եղած տարակարծությունները բացառապես վերաբերում են 1920-ական թվերին, իսկ Մ.Մելքոնյանի աշխատությունը իրավամբ այդ վիճաբանությունների արդյունքների համառոտ ամփոփումն է։ Հրապարակի վրա եղած մյուս աշխատություններում նախկինում հարուցված վեճերը շրջանցվել են և հիմնականում շեշտը դրվել է մայիսյան իրադարձությունների պարզ նկարագրմանը։

Պատմական գրականության մեջ մայիսյան ապստամբության վերաբերյալ վիճաբանությունները գլխավորապես պտտվում են հետևյալ հիմնական հարցերի շուրջը։

1. Տարաձայնություններ ապստամբության նախադրյալների, բնույթի և շարժիչ ուժերի վերաբերյալ։

Ուսումնասիրողները, ինչպես նաև 1927-1929 թթ. դիսկուսիայի ժամանակ մտքերի փոխանակության մասնակիցների մեծ մասը այն կարծիքն են պաշտպանել, որ առկա էին անհրաժեշտ նախադրյալներ ապստամբության հաղթանակի հա-

---

1 Գ.Ղարիբջանյան,Մայիսյան ապստամբությունը Հայաստանում,Ե., 1955թ.։
2 Հ.Տոնոյան,Փառապանծ էջ Հայաստանի ռևոլյուցիոն շարժումների պատմությունից, 1920թ. Մայիսյան ապստամբությունը Հայաստանում,Ե.,1955թ.։
3 Գ.Ա.Գալոյան, Մայիսյան հերոսական ապստամբությունը,Ե.,1960թ.։
4 Ս.Գ.Սողոմոնյան,Քաղաքացիական կռիվները Զանգեզուրում, Ե..1958թ.։
5 Հ.Ս.Կարապետյան,Մայիսյան ապստամբությունը Հայաստանում,1920,Ե.,1951թ.։
6. Ա.Հ.Մելքոնյան,Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը,Ե., 1965թ.

մար: Նշվում է, որ երկրում ստեղծվել էր հեղափոխական իրադրություն, առկա էին հեղափոխության հաղթանակի օբյեկտիվ և սուբյեկտիվ պայմանները, որ միայն ճիշտ տակտիկա վարելու դեպքում ապստամբության հաղթանակը ապահովված կլիներ: Միայն Հովհ. Դուրգարյանն է, որ այլ կարծիք է հայտնել: Զիջելով հեղափոխական իրադրության առկայությունն ընդհանրապես, նա կարծում է, որ անմիջական հեղափոխական սիտուացիա չկար, որ երկրում դեռևս օբյեկտիվ պայմանները ամբողջովին չէին հասունացել և եզրակացնում, թե ,,նույնիսկ մայիսյան ապստամբությունը մեզ համար ունենար հաջող ելք, միևնույնն է պահպանել մեր ձեռքում իշխանությունը մենք չէինք կարող, շնորհիվ գլխավորապես երկրի տնտեսական ծանր պայմանների,,[1]: Նրա այս տեսակետը ժամանակին հերքվեց: Անշուշտ սխալ է նման եզրահանգումը և այդ պատճառով էլ կողմնակիցներ չունեցավ, բայց ճիշտ էր նա այն բանում, որ ապստամբությունը նախապատրաստված չէր:

Ավելի շատ վիճաբանությունների տեղիք է տվել ապստամբության շարժիչ ուժերի և բնույթի հարցը: Աշոտ Հովհաննիսյանը և նրանից հետո հանդես եկած հետազոտողների մեծ մասը միանգամայն ճիշտ կերպով նշել են, որ ապստամբությունը պրոլետարական, սոցիալիստական բնույթ ուներ, հետևաբար նրա շարժիչ ուժն ու հեգեմոնը բանվոր դասակարգն էր դաշնակցած չքավոր գյուղացիության հետ:

1920-ական թվականներին Շ.Ամիրխանյանը առաջ քաշեց նոր տեսակետ, ըստ որի Հայաստանի բանվոր դասակարգը քանակական փոքրաթվության և որակական թուլության պատճառով չէր կարող հեղափոխության շարժիչ ուժը հանդիսանալ, ուստի որպես այդպիսին հանդես էր գալիս գյուղացիությունը: Չնայած գյուղացիությունն էր շարժման ղեկավարն ու առաջմղիչ ուժը, թեև ըստ հեղինակի ,,հայկական գյուղում շահագործման նյութական և բնական հնարավորությունները միշտ սահմանափակ են եղել,,[2], այնուհանդերձ հեղափոխությունը սոցիալիստական էր, քանզի այն ղեկավարվում էր ռուսական պրոլետարիատի կողմից: Նրա կարծիքով գյուղացիության հեղափոխական ազդեցությունը ավելի մեծ էր բանվոր դասակարգի շրջանում, որ ,,նրա տրամադրությունը /բանվորների – Պ.Մ./ նույնպես խոշոր առնչություն ուներ գյուղի հեղափոխական տրամադրության հետ, որովհետև նրա մեծամասնությունը կապված էր գյուղի հետ և գյուղը ավելի շուտ ազդեցություն էր գործում նրա վրա, քան ինքը գյուղի վրա,,[3]: Նա գտնում է, որ գյուղացիությունը սկզբնական շրջանում գնում էր դաշնակցականների հետևից, բայց 1919 թ. վերջերից երես դարձրեց նրանից մեծ մասամբ դրսից եկած տարրերի՝ բոլշևիկների ագիտացիայի շնորհիվ: Շ.Ամիրխանյանի

----------

1 Հովհ.Դուրգարյան,Մայիսյան ապստամբությունը Հայաստանում,տես ,,Կոմունիստ,, , hn. 9-10, 1927, էջ 95:

2 Շ.Ամիրխանյան, Մայիսյան ապստամբությունըՀ Հայաստանում, էջ 69:

3 Նույն տեղում, էջ 81:

այդօրինակ տեսակետները, որի պաշտպանությամբ նա հանդես եկավ նաև հետագայում[1], իրավացի քննադատության ենթարկվեց ուսումնասիրողների կողմից և մերժվեց։ Այս հարցում անորոշություն է նկատվում նաև Ս.Վարդանյանի մոտ, ըստ նրա հեղափոխության շարժիչ ուժերն էին ,,աշխատավորական լայն զանգվածները,,[2]։

Հետազոտողների մեծագույն մասը ցույց են տվել, որ չնայած քանակական փոքրաթվությանը Հայաստանի բանվոր դասակարգը հանդիսանում էր հեղափոխական շարժումների միակ ղեկավարը, նրա շարժիչ ուժը, այդպես էր նաև Մայիսյան ապստամբության ժամանակ։

2. Տարաձայնություններ բոլշևիկյան կազմակերպությունների զինված ապստամբության նախապատրաստման և տակտիկական հարցերի շուրջը։

Ինչպես արդեն նշվել է, սովետահայ պատմագրության մեջ տիրապետող է այն կարծիքը, որ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների հունվարյան կոնֆերանսը զինված ապստամբության կուրս վերցրեց և հանձնարարեց տեղական կազմակերպություններին նախապատրաստական աշխատանքներ տանել այդ ուղղությամբ։

Վերջին երկու տասնամյակում մայիսյան ապստամբության վերաբերյալ գրականության մեջ, այլև Հայաստանում սովետական իշխանության հաստատմանը նվիրված ուսումնասիրություններում ընդգծվում է, որ ելնելով հունվարյան կոնֆերանսի որոշումներից տեղական կուսկազմակերպությունները ոչ միայն ագիտացիոն, այլ նաև անմիջական գործնական մեծ աշխատանք էին կատարում զինված ապստամբության նախապատրաստման ուղղությամբ. Պետք է նշել, որ թերևս նման եզրակացության համար հիմք է ծառայել կոնֆերանսի այն մատնանշումը, թե պետք է պատրաստ լինել Անդրկովկասի հանրապետություններից մեկնումեկում սովետական կարգեր հաստատելու դեպքում տապալելու դաշնակցականների տիրապետությունը։ Սակայն պետք է ընդունել նաև այն, որ դեռևս ցույց չի տրվել թե հատկապես ինչպիսի գործնական աշխատանքներ էին տարվում զինված ապստամբության անմիջական նախապատրաստման ուղղությամբ։ 1920-ական թվականներին լույս տեսած աշխատություններում և դիսկուսիայի ժամանակ այն միտքն էր ընդգծվում, որ կուսկազմակերպությունները դեռևս նախապատրաստական աշխատանքներ չէին տարել, որ այն օրակարգի հարց դարձավ միայն մայիսմեկյան ցույցերից հետո։ Որ այդպես է, պարզորոշ ասված է նաև Արմենկոմի մայիսի 31-ի զեկուցագրում։ Այդ հանգամանքը նկատի ուներ զեկուցագրի հեղինակը, երբ ընդգծում էր, թե ապստամբությունը պատահական չէր, բայց ,,եթե այդ բոլորն անհաջող վերջացավ, դա միմիայն ալեքսանդրապոլցիների վաղաժամ ելույթի պատճառով էր,,[3]։

-----------

1 Ш.Амирханян, Из истории борьбы за Советскую власть в Армении,

Տես նաև ,,Լենինյան ուղիով,, նո. 7. 1959 թ.։

2 Ս.Վարդանյան,Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում,էջ 229։

3 Մայիսյան ապստամբությունը Հայաստանում /1920-1930 թթ./էջ 154։

Գրականության մեջ, հատկապես 1920-ական թվերի, մեծ տեղ է հատկացված ապստամբության կազմակերպման տակտիկական տարաձայնությունների լուսաբանմանը: Համոզիչ կերպով ցույց է տրվել, որ Հայաստանի կուսկազմակերպություններում մինչև մայիսյան իրադարձությունները արմատական որևէ տարաձայնություն գոյություն չուներ: Սակայն մայիսմեկյան ցույցերից հետո Արմենկոմի և երկրի խոշորագույն կազմակերպության՝ Ալեքսանդրապոլի կոմիտեի միջև տակտիկական լուրջ տարաձայնություններ ծագեցին ապստամբության ժամանակի և շարժման բազայի կապակցությամբ: Բոլոր ուսումնասիրողները միանգամայն ճիշտ են համարում Արմենկոմի ցուցումը մայիսի 1-ին աշխատավորների խաղաղ ցույցեր կազմակերպելու մասին: ճիշտ են համարում և այն, որ Արմենկոմը իշխանությունը գրավելու խնդիր չէր դրել կուսկազմակերպությունների առջև: Ինչպես երևում է Ալեքսանդրապոլի կոմիտեի կողմից ,,Ալեքսանդրապոլի իրադարձությունների մասին,, Արմենկոմ ուղարկված զեկուցագրից, այնտեղ նույնպես իշխանությունը գրավելու խնդիր չէր դրվել: Ալեքսանդրապոլում իրադարձություններն այլ ընթացք ունեցան, որի հետևանքով հարց դրվեց անհապաղ գրավել իշխանությունը, չնայած մնացած շրջանները դեռևս պատրաստ չէին այդ բանին: Փաստերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ իրադարձությունների բնականոն զարգացման արագացումը ավելի շուտ սուբյեկտիվ գործոնի հետևանք էր: Ինչպես նշված է Արմենկոմի զեկուցման մեջ, այդ բանին նպաստեց հետապնդումների և ձերբակալումների հնարավորությունը: ,,...Մենք համոզված ենք այն բանում,- նշված է զեկուցագրում,- որ այդ բոլորը չափազանցեցված է և որ անգամ ելույթի հարցը... հանդիսանում էր... անձնական կյանքը փրկելու հարց,,[1]: Կարևոր վկայություն է, բայց որին ուշադրություն չեն դարձրել հետազոտողները, նաև այն, որ ,,Ալեքպոլից ժամանած ընկերոջ բանավոր ինֆորմացիան... հիմնովին հակասում է ընկ. Ավիսի հաղորդագրություններին: Այդ բանի վրա՛ ուշադրություն դարձրեց ամբողջ Արմենկոմը,,[2]: Թերևս պիտի ենթադրել, որ այդ հանգամանքը կարևոր կռվան էր, որի պատճառով Արմենկոմը վերանց զինված ապստամբությունն անհապաղ սկսելու սանկցիա տալ: Մեզ թվում է, որ Արմենկոմի որոշումը ապստամբությունը սկսելու ժամանակի հարցում բխում էր ամբողջ երկրում տիրող իրադրությունից և այն բանից, որ անհրաժեշտ էր ,,ամենուրեք համաձայնեցնել մեր գործողությունները, քանի որ անջատ ելույթները փոշիացման և պարտության կհասցնեին, որ անհրաժեշտ է բոլոր շրջանների հետ կապ ունենալ...,,[3]:

---

1 ՄԼԻ ՀՄՍ, ֆ. 4033, ց.1, գ. 850, թ.2:
2 Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, /1920-1930/, էջ 150:
3 Նույն տեղում, էջ 149:

Հետևաբար թվում է, իրավացի չէ Ա.Մելքոնյանը Արմենկոմին քննադատելով դանդաղկոտության մեջ: Կարծում ենք, որ տեղին չէ նաև այն դիտողությունը, թե Արմենկոմը անկարող եղավ անհապաղ վերջ տալու տարաձայնություններին[1]: Հենց ինքը Ա. Մելքոնյանն է, և ոչ թե մեկ ուրիշը, նշել, որ մինչև մայիսյան իրադարձությունները, Արմենկոմի և տեղական կազմակերպությունների միջև տարաձայնություններ գոյություն չունեին, որ այդպիսին երևան եկավ միայն մայիսյան ցույցերից հետո: Հետևաբար, իրադարձությունների գլխապտույտ արագությունը հնարավորություն չտվեց Արմենկոմին վճռական միջոցներ ձեռնարկել տարաձայնություններին վերջ տալու: Հեղինակը միանգամայն ճիշտ կերպով նկատում է, որ Ալեքսանդրապոլի կոմիտեն անկախ գիծ էր վարում, իսկ սանկցիա պահանջելը ժամկան էր, որ Ալեքսանդրապոլում ապստամբությունը կատարված փաստ էր: Ա.Մելքոնյանը արդարացիորեն քննադատել է Ալեքսանդրապոլի կոմիտեին շտապողականություն ցուցաբերելու համար: Եթե այդ այդպես է՝ տեղի՞ն է արդյոք քննադատել Արմենկոմին դանդաղկոտության համար: Թվում է, որ ոչ: Հապա որն էր Արմենկոմի սխալը: Հնազանդվելով Ալեքսանդրապոլի կոմիտեի համառ պահանջներին Արմենկոմը իր երկու անդամներին լայն լիազորություններով գործուղեց Ալեքսանդրապոլ՝ պահանջելով. ,,եթե չի կարելի կասեցնել ապստամբությունը, որ անհրաժեշտաբար պետք էր անել, ապա միաժամանակ կապվել Ղարաքիլիսայի, Չեզոք գոտու և հարակից շրջանների հետ,,[2] և ապահովել ապստամբության հաջողությունը: Արմենկոմը փորձեր կատարեց կապվելու նաև մնացած շրջանների հետ միաժամանակյա ելույթն ապահովելու համար: Այդ ձեռնարկը, այն էլ ուշացումով, հաջողություն ունեցավ միայն Նոր-Բայազետի գավառում, ինչպես տեսնում ենք Արմենկոմը հնարավորության սահմաններում արեց այն, ինչ կարող էր: Կարծում ենք, որ Արմենկոմը Ալեքսանդրապոլ պետք է գործուղեր ավելի ազդեցիկ և գործունյա անդամներին, որոնք էապես կարողանային ազդել իրադարձությունների ընթացքի վրա և տարերային շարժմանը կազմակերպված բնույթ հաղորդեին:

Վիճաբանությունների տեղիք է տվել, և պիտի ասել, որ այդ հարցը դեռևս բազմակողմանի լուսաբանման չի ենթարկվել, թե որտեղից սկսել զինված ելույթը: 1920 թ. մայիսի 31-ի զեկուցագրում նշվում է, որ դաշնակցականների տիրապետությունը տապալելու համար շարժման բազա պետք է հանդիսանար Ղազախը, որի հետ միաժամանակ պետք է սկսեին բոլոր շրջանները: Արմենկոմի նման որոշման դեմ հանդես եկավ Ալեքսանդրապոլի կուսկազմակերպությունը, նշելով, որ ,,Հայաստանի կոմիտեի որոշումը,- սկսել Ղազախի գավառից, իսկ Ալեքսանդրապոլը դեռ սպասի, մեզ դնում է անել դրության մեջ,,[3]: Հաջորդ նամակում Ալեքսանդրապոլի կոմիտեն կտրուկ կերպով մերժում

---

1 Ա.Մելքոնյան,Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը,էջ 104 և հետո:
2 Մայիսյան ապստամբությունը Հայաստանում,էջ 151:
3 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 4030, ց.1, գ. 23, թ.3:

է Արմենկոմի պլանը և պահանջում, որ ,,առաջինը պետք է սկսենք Ալեքսանդրապոլում, որտեղից մենք կսկսենք Ղազախի վրա շարժվել,,[1]: Ալեքսանդրապոլի կոմիտեի դիրքորոշումը քննադատության է ենթարկվել Շ.Ամիրխանյանի կողմից[2]: Նախ կասկածի տակ է դրել Արմենկոմի այդօրինակ պնդման ճշմարտացիությունը, որովհետև, ըստ նրա, Արմենկոմը ընդհանրապես դեմ էր զինված ապստամբության և իբր կողմնակից էր սովետական իշխանության խաղաղ պրոպագանդմանը: Այլ խոսքով նա քննադատում է Ալեքսանդրապոլի կոմիտեին ոչ թե Արմենկոմին պաշտպանելու մտայնությամբ, այլ իր սեփական տեսակետը, ըստ որի ապստամբությունը պետք է սկսել միայն Դիլիջանի գավառից, որովհետև Դիլիջանն էր ապստամբական ուժերի տեսակետից քազմամարդ, և որ գլխավորն է սահմանակից էր Սովետական Ադրբեջանին: Հետագայում այդ հարցին անդրադարձել են Թ.Մանդալյանը և Ա.Մելքոնյանը: Թ.Մանդալյանը վճռականորեն մերժում է Ալեքսանդրապոլի կոմիտեին ուղղված Շ.Ամիրխանյանի քննադատությունը՝ հայտարարելով, որ մայիսյան խորհրդակցությունը որոշում ընդունեց ապստամբությունը սկսել Դիլիջանի գավառից[3]: Հենվելով Թ.Մանդալյանի այդ վկայությանը, Ա.Մելքոնյանը նույնպես կարծում է, որ շարժման քազա ընդունվեց Դիլիջանի գավառը[4]: Կարծում ենք, որ նման ենթադրությունը բավարար հիմք չունի: Այլապես Ալեքսանդրապոլը ոչ թե առաջինը կսկսեր, այլ կսպասեր Դիլիջանի ազդանշանին: Ամենաքիչը տարօրինակ կլիներ, որ Ալեքսանդրապոլում ստեղծված հայաստանյան հեղափոխական կոմիտեն պետք է սպասեր Դիլիջանի ազդանշանին և այն դեպքում, երբ Դիլիջանում դեռ ապստամբությունը կազմակերպող կենտրոն չէր ստեղծվել: Դիլիջանի գավառից սկսելու ծրագիրը միայն կունենար այն դեպքում, երբ նախապես համաձայնեցված լիներ Կարմիր բանակի գործողությունների հետ, ապահովվեր նրա ռեալ աջակցությունն ու անմիջական մասնակցությունը, մի բան, որին, թվում է, Կարմիր բանակը նախապատրաստված չէր: Մեզ թվում է, որ ավելի իրական էր Ալեքսանդրապոլի կոմիտեի դիրքորոշումը, այն է՝ նախ սկսել բանվորական կենտրոնում /Ալեքպոլ, Կարս-Սարիղամիշ/ և ապա տարածվել մյուս շրջաններում:

Ապստամբությունը պարտություն կրեց ոչ թե զինված ուժերի համար ոչ ճիշտ վայր ընտրելու հետևանքով, այլ ուներ բացարձակապես ուրիշ պատճառներ:

Սովետահայ պատմաբանները մեծ ուշադրություն են դարձրել նաև մայիսյան ապստամբության՝ ժողովրդական լայն զանգվածների հետագա հեղափոխա-

------------

1 ՄԼԻ ՀՄԱ, Ֆ. 4030, ց.1, գ. 24, թ.2:
2 Շ.Ամիրխանյան, Մայիսյան ապստամբությունը Հայաստանում, էջ 93 և հետ:
3 Թ.Մանդալյան, Մայիսյան ապստամբությունը, էջ 45, և հետ:
4 Ա.Մելքոնյան, Մայիսյան ապստամբության պատմության հարցի շուրջը, էջ 54-55:

կանգման գործում ունեցած դերի և պարտության պատճառների բացահայտման ուղղությամբ:

Մայիսյան ապստամբության պարտության պատճառների հարցում դեռևս կարծիքների միասնականություն չկա: Որքան ուսումնասիրող, այնքան էլ կարծիքներ գոյություն ունեն: Հրապարակի վրա եղած ուսումնասիրությունների համադրումից կարելի է տեսնել ապստամբության պարտության հիմնական պատճառները, որոնք հանգում են հետևյալին.

ա/ բանվոր դասակարգի քանակական փոքրաթվությունն ու անբավարար կազմակերպվածությունը և դրա հետ կապված բոլշևիկյան կազմակերպությունների թուլությունը: Անբավարար կապը բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության միջև.

բ/ ապստամբությունը լիովին նախապատրաստված չէր, և որոշ վայրերում տարերային բնույթ ուներ, իսկ կուսկազմակերպությունները ոչ բոլոր դեպքերում կարողացան այն կազմակերպական հունի մեջ դնել.

գ/ Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտեի և տեղական հեղափոխական կոմիտեների կողմից թույլ տրված ռազմա-տակտիկական սխալները, որոնք ի վերջո հանգեցրին ապստամբության պարտությանը:

Անառարկելիորեն ցույց է տրվել, որ այն համաժողովրդական, տարերային ընդվզում էր ընդդեմ տիրապետող բուրժուական իրավակարգի: Այն ոչ թե պատահական և ,,դրսից,, եկած բոլշևիկների հրահրումով առաջացած ,,անկարգություն,, էր, ինչպես հետին թվով փորձում են ներկայացնել դաշնակցականները, այլ, ընդհակառակը, դաշնակցության կուսակցության հակաժողովրդական սոցիալ-տնտեսական քաղաքականությամբ նախապատրաստված զանգվածային հեղափոխական շարժում էր՝ տարածված գրեթե ամբողջ երկրում: Միևնույն ժամանակ ընդգծվել է, որ բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական շարժումները ղեկավարում էին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները:

- 000 -

Բացի ընդհանուր աշխատություններից Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար մղված պայքարի նոյեմբերյան իրադարձություններին են նվիրված Աշոտ Հովհաննիսյանի, Վ. Պարսամյանի և Մ. Ներսիսյանի՝ մեր կողմից արդեն հիշատակված ուսումնասիրությունները:

Մայիսյան ապստամբության պարտությունից հետո երկրում մոլեգնում էր դաժան ռեակցիան: Բոլշևիկյան կազմակերպությունները օրենքից դուրս հայտարարվեցին: Խոշորագույն կուսկազմակերպությունների մեծագույն մասը ռեակցիայի կողմից ջախջախվեցին: Դաշնակցական կառավարության արդարադատության մինիստրության տվյալներով արտակարգ դատարանների կողմից մայիսի 13-ից մինչև հոկտեմբերի 15-ը ընկած ժամանակամիջոցում ձերբակալվել են Երևանում՝ 163, Ալեքսանդրապոլում՝ 116, Դիլի-

ջանում՝ 140, Կարսում՝ 75 հոգի[1]: ՌԿ/բ/Կ Կենտկոմին ուղարկված զեկուցագրում, որը հավանաբար կազմվել է մայիսյան շարժումներից անմիջապես հետո, Հայաստանի կոմկուսի Արտասահմանյան բյուրոն նշում էր, որ պարտության հետևանքով կուսկազմակերպությունները ջախջախվել են, հեղափոխական ուժերը ցրվել, հետևաբար ներկայումս առանց Սովետական Ռուսաստանի անմիջական օգնության կարճ ժամանակամիջոցում ինքնուրույն շարժում կազմակերպել հնարավոր չէ[2]: Այս կապակցությամբ Ս.Կարապետյանը նկատում է, որ Արտասահմանյան բյուրոն ամենայն ճշտությամբ չէ, որ ներկայացրել է կուսկազմակերպությունների վիճակը, քանզի փաստերը խոսում են այն մասին, որ բոլոր կազմակերպությունները չէ, որ ջախջախվել էին[3]: Եվ որպես իր ասածի հիմնավորում թվարկում է նաև այն կազմակերպություններին, որոնք ոչ տերիտորիալ առումով և ոչ էլ կազմակերպչորեն այդ ժամանակ Հայաստանի կոմկուսին չէին ենթարկվում /Լոռի-Զանգեզուր/: Բացի այդ, զեկուցման մեջ ամենևին խոսք չկա թե կազմակերպությունները միանգամայն դադարեցրել էին իրենց գործունեությունը: Այնպես որ մեզ թվում է, թե Ս.Կարապետյանը իրավացի չէ:

Սովետահայ պատմաբանները ցույց են տվել, որ ՌԿ/բ/Կ Կենտկոմի և նրա Կովկասյան բյուրոյի ձեռնարկած միջոցառումների շնորհիվ Հայաստանում կարճ ժամանակաընթացքում կարգավորվեց կուսակցական աշխատանքը: 1920 թ. ամառը իրավացիորեն համարվում է Հայաստանի կոմունիստական կուսակցության ձևավորման շրջան: Մատնանշվում է, որ 1920 թ. մայիսյան խորհրդակցության որոշման համաձայն Վրաստանի և Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները ճանաչվում են որպես ինքնուրույն կոմունիստական կուսակցություններ: Երկրային կոմիտեի և Արմենկոմի անդամներից հաստատվում է ժամանակավոր կենտրոնական կոմիտե: Բացի կենտկոմից, ինչպես նշել է Ա.Մռավյանը, ստեղծվում է նաև կենտկոմի Արտասահմանյան բյուրո, որի կազմի մեջ մտել են երկրային կոմիտեի հայ անդամները /Ս.Կասյան, Ս.Բեկզադյան, Ա. Մռավյան/[4], իսկ օգոստոսին Կովկասյան բյուրոյի որոշմամբ Ս.Տեր-Գաբրիելյանը նշանակվում է Հայաստանում լիազոր-ներկայացուցիչ, հանձնարարելով նրան կուսակցական ամբողջ աշխատանքի ղեկավարումը: Սեպտեմբերին ՌԿ/բ/Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոն քննարկում է Հայաստանի կոմկուսի կենտկոմի կազմի հարցը և ներկայացնում ՌԿ/բ/Կ Կենտկոմի հաստատմանը: Հոկտեմբերի 1-ին ՌԿ/բ/Կ Կենտկոմի կազմբյուրոն հաստատում է Հնյաստանի կոմկուսի կենտկոմի և նրա Արտասահմանյան բյուրոյի կազմը[5]:

----------

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 199, ց.1, գ. 124, թ. 371-372:
2 ՄԼԻ ՀՄԱ, ֆ. 4033, ց.1, գ. 916, թ.1-3:
3 Ս.Կարապետյան, նշվ.աշխ.,էջ 295:
4 Ա.Մռավյան, Հոդվածներ և ճառեր, էջ 331:
5 Գ.Գալոյան, Բանվորական շարժումը... էջ 334-335:

ՀԿ/բ/Կ-ի կազմակերպական ձևավորումը գործնական մեծ նշանակություն ունեցավ կուսկազմակերպությունների վերականգնման և աշխատավորական զանգվածների շրջանում ագիտացիոն ու կազմակերպչական աշխատանքները ուժեղացնելու գործում: Ինչպես նշել է Ս. Կարապետյանը, հունիս-հուլիս ամիսներին Հայաստանում կուսակցական աշխատանքը խիստ թուլացել էր, բայց օգոստոսից սկսած, Կովկասյան բյուրոյի և ՀԿ/բ/Կ Կենտկոմի Արտասահմանյան բյուրոյի միջոցառումների շնորհիվ, դարձյալ աշխուժացում է նկատվում, ընդգրկելով նորանոր ուժեր[1]:

Կարևոր նշանակություն է տրված 1920 թ. սեպտեմբերին հրավիրված ՀԿ/բ/Կ կոնֆերանսին, որը, ինչպես նշել են Գ.Գալոյանը և Ս.Կարապետյանը, Հայաստանի կուսկազմակերպությունների գործունեությունը նպատակամղեց դաշնակցական տիրապետության դեմ զինված ապստամբության նախապատրաստելուն:

Մայիսից հետո ևս հեղափոխական շարժումները առանձնապես լայն ծավալ են ստանում Ադրբեջանին սահմանակից Դիլիջանի գավառում և Զանգեզուրում: Ուսումնասիրություններում մատնանշվել է, որ մայիսյան պարտությունից հետո Դիլիջանի գավառային կազմակերպության եռանդուն աշխատանքի հետևանքով և շնորհիվ Սովետական Ադրբեջանից ստացված օգնության 1920 թ. հունիսին նորից ապստամբական շարժում է բռնկվում: Ըստ Շ. Ամիրխանյանի տվյալների ապստամբների թիվը անցնում էր 2000-ից[2]: Ինչպես նշել են Ա. Հովհաննիսյանը և Շ.Ամիրխանյանը ապստամբությունը պարտություն կրեց զինվորական հրամանատարության ապաշնորհության պատճառով:

Քաղաքացիական կռիվները ավելի դաժան և երկարատև բնույթ ստացան Զանգեզուրում: Մայիսին կրած պարտությունից հետո 1920թ. ամռանը Կարմիր բանակի զորամասերի շնորհիվ Զանգեզուրում նորից հաստատվում է սովետական իշխանություն: 11-րդ Կարմիր բանակի զորամասերի և նրանց միացած ապստամբական ուժերի մարտական գործողությունները դաշնակցական ուժերի դեմ հանգամանորեն լուսաբանվել է Աբ.Մնացականյանի[3] և Ս.Սողոմոնյանի[4] աշխատություններում: Ցույց է տրվել, որ չնայած օգոստոսի 10-ի համաձայնագրով դաշնակցական կառավարությունը համաձայնվել էր, որ Զանգեզուրը, որպես վիճելի տերիտորիա, ժամանակավորապես զբաղեցվում է սովետական զորամասերի կողմից, սակայն այնպես էլ չկատարվեց այդ պարտավորությունը և շարունակվում էր մարտերը: Դաշնակցականները աշխատում են այն ներկայացնել որպես զուտ տեղական

-------

1 Ս.Կարապետյան, նշվ.աշխ.,էջ 299:
2 Ш.Амирханян, Из истории борьбы, стр.34.
3 Ա.Մնացականյան,Ռևոլյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները:
4 Ս.Սողոմոնյան, Քաղաքացիական կռիվները Զանգեզուրում:

բնակչության ինքնապաշտպանական մարտեր: Սակայն փաստերը հակառակն են ապացուցում: Պառլամենտի անդամ Ե.Միրաքյանը կառավարությանը հասցեագրած նամակում նշելով, որ Զանգեզուրում բոլշևիկյան իշխանության հաստատվելուց հետո քաղաքանին ծյով երիտասարդներ են /դաշնակցական/ հեռացել, առաջարկում է ստեղծել զինված ջոկատներ: ,,Ծրագրվելիք հարձակողական գործողությունները,- շարունակում է նա,- չպիտի տալ, ինչպես պաշտոնական բնույթ, ինչպես ունենալով Խորհրդ/ային/ իշխանության հետ կայացած պայմանագիրը, այլ, ընդհակառակը , պիտի ներկայացնել արտաքին աշխարհի առջև իբրև գյուղացիական ապստամբություն մեծամասնականների դեմ,,[1]:

Ինչպես նշել է Ար. Մնացականյանը 1920-ին Զանգեզուրում քաղաքացիական կռիվները ցանկալի արդյունքի չեն հասնում մի շարք պատճառների, որոնց թվում նաև սովետական զորամասերի հրամանատարության և Խորհրդային Ադրբեջանի Հեղկոմի կողմից թույլ տրված սխալների հետևանքով, որոնցից մեկն էլ թուրքական գնդի մտցնելն էր Զանգեզուր[2]:

Զանգեզուրում Կարմիր բանակի զորամասերի ժամանակավոր անհաջողությունների մասին 28-րդ դիվիզիայի հրամանատար Նեստերովսկին Օրջոնիկիձեին ուղարկած զեկուցագրում հետևյալն է նշել. ,,Բնակչության վերաբերմունքը Կարմիր բանակի նկատմամբ սկզբում նպաստավոր էր, սակայն օրեցօր նկատելիորեն վատանում էր այն բանի հետևանքով, որ ոչ Ադրբեջանի կենտրոնական իշխանությունը, ոչ մարզային Հեղկոմը, ոչ էլ բանակը միջոցներ չձեռնարկեցին չքավորների, սովետական ծառայողների, միլիցիայի և գաղթականների վիճակը բարելավելու համար,,[3]:

Հայ-թուրքական պատերազմը դարձյալ հարցականի տակ էր դնում արևմտահայ հատվածի ֆիզիկական գոյությունը: Դաշնակցական կառավարության հակաժողովրդական քաղաքականության հետևանքով թուրքական զավթիչները կարճ ժամանակամիջոցում գրավեցին Հանրապետության տարածքի նշանակալի մասը: Պատերազմում կրած պարտությունը դաշնակցականներին բոլորովին հեղինազրկեց ժողովրդական լայն զանգվածների շրջանում: Բնակչությունը այլևս չէր ենթարկվում դաշնակցական ադմինիստրացիային: Ստեղծված պայմաններում հայ ժողովրդի փրկության միակ ելքը սովետական իշխանության հաստատումն էր: Հայաստանի կոմկուսի ղեկավարությամբ աշխատավորական զանգվածները ձեռնամուխ եղան դրա իրականացմանը: Նոյեմբերի 29-ին Հեղկոմը հայկական գնդի հետ անցնում է սահմանը և Հայաստանը հռչակում սովետական հանրապետություն: Դրա հետ միաժամանակ Լեգրանի կողմից Երևանում դաշնակցականների հետ բանակցություններ է սկսվում Հայաստանը սովետականացնելու.

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ. Ֆ. 199, ց.1, գ. 147. թ. 95-96:
2 Ա.Մնացականյան, նշվ.աշխ. էջ 187-188:
3 ՄԼԻ ԿԿԱ, Ֆ. 85, ց.18, գ. 61, թ.1-3:

համար: Առաջացած վիճակից ելք չունենալու հետևանքով դաշնակ-
ցականները ստիպված հրաժարվում են իշխանությունից: Դաշնակցականները հոժարակամ չզիջեցին իշխանությունը, այլ այն պահելու ի վիճակի չէին: Դրա ապացույցն է իշխանություն չունենալու միջոցին իսկ Ալեքսանդրապոլի խայտառակ պայմանագրի ստորագրումը, մի ակտ, որից ավելի մեծ դավաճանություն ժողովրդի շահերին հազիվ թե հնարավոր լինի պատկերացնել: Դեկտեմբերի 2-ի համաձայնագրին միանգամայն դիպուկ գնահատական է տվել Ա.Հովհաննիսյանը, անվանելով ,,հեղափոխության արտաքին էպիզոդներից մինը,, , սակայն անհրաժեշտ այն առումով, որ պետք էր ,,ձեռք առնել հնարավոր բոլոր միջոցները, որպեսզի իմպերիալիստական որևէ ավանտյուրա կամ քաղաքական որևէ պրովոկացիա առիթ չտար զուր արյունահեղության,,: Այդպես էլ եղավ; Հայկական կարմիր ջոկատները սովետական զորամասերի հետ առանց դիմադրության հանդիպելու մտան Երևան: Ուստի և միանգամայն տեղին է Ծ.Աղայանի քննադատական դիտողությունն այն ուսումնասիրողների հասցեին, որոնք փաստեր չունենալով հանդուգն նշել են դաշնակցական ուժերի կատաղի դիմադրության մասին:

1920-1930-ական թթ. գրականության մեջ այս խոշոր իրադարձությունը անվանվել է նոյեմբերյան հեղափոխություն: Սակայն հետագայում այդ տերմինը շրջանառությունից հանվեց այն պատճառաբանությամբ, որ նոյեմբերին Հայաստանում մի նոր հեղափոխություն տեղի չի ունեցել, այլ այն հոկտեմբերյան հեղափոխության շարունակությունն էր:

Բանվոր դասակարգի և գյուղացիության հեղափոխական երկարամյա պայքարի և Սովետական Ռուսաստանի անշահախնդիր օգնության շնորհիվ Հայաստանում վերջնականապես տապալվեց դաշնակցականների հակաժողովրդական կառավարչակարգը և հաստատվեց Սովետական իշխանություն: Հայ ժողովուրդը, որ դարեր շարունակ տառապել էր օտարի լծի տակ, իր իսկական ազատությունը ձեռք բերեց Սովետական իշխանության շնորհիվ:

Այսպիսով, սովետահայ պատմաբանների պատկառելի քանակին հաջողվել է տալ Հայաստանի բանվոր դասակարգի և գյուղացիության՝ Սովետական իշխանության համար մղած պայքարի պատմության ամբողջ ընթացքը: Նվաճումները ակնառու են: Սակայն այդ չի նշանակում, որ այլևս այդ ասպարեզում անելիքներ չկան: Խնդիրն այն է, որ պրոբլեմի մի շարք հարցեր դեռևս սպասում են իրենց լիակատար լուսաբանմանը:

Ստորագրված է տպագրության 18/3-1974թ.
Հանձնված է արտադրության 28.3.1974թ.
Թուղթը 60x90, 3 մամ. Գինը 18 կոպ.

Պատվեր 119 ՎՖ 05512 Տպաքանակ 250

Երևանի պետական համալսարանի "[illegible]" տպագրական արտադրամաս, Երևան, Մռավյան փող. 1

Գինը 18 կոպ.

A II / 52946

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220052946